

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՆԻԾ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՈՒՐԱՑԿԱՆՈՒԹԵՍՆ ՀԱՅԸ

«Որքերէն տասնութը զերձակ, տասնինը ատաղ-
ձագործ, ու քառասուներեքը կօշկակար ըլլալու վրայ են:
Ոմանք սքանչելի կերպով կը յառաջդիմեն: Տղայ մը իր
ապրուստը հանելու վիճակին հասնելուն պէս, պզտիկ
սարոյք մը կուտանք իրեն և զուրս կը զրկենք՝ զխուն ճա-
րը նայելու: Տասը տղայ այդ կերպով ելած դացած են
արդէն, մեծ մասը՝ իրենց իսկ յայտնած փափաքին վրայ,
որպէ՛ս զի տեղ բանան աւելի կարօտներուն:»

«Որքանոցին մանչերը յաճախ թողտուութիւն խընդ-
րած են կերակուր չուտելու, որպէ՛ս զի այդ կերպով խը-
նայուած ուտելիքը թշուառներուն տրուի:»

Խարբերդէն են այս տեղեկութիւնները: Ամերիկայի
Հայկական նպաստամատոյց Յանձնաժողովին (Պարէն
Ութըր փոխադրուած այժմ) նոր քարտուղարը, Օրիորդ
Էմիլի Հուիլը, կը հրատարակէ զանոնք իրենց եռամսեայ
պզտիկ տետրակներու շարքին վերջին թիւին մէջ:

Մեծ հաճութեամբ է որ կ'արտագրեմ այդ տողերը, ո-
րոնք շարք մը դիտողութիւններու ու խորհրդածութիւննե-
րու վրայ հիմնուած համոզում մը կը խախտեն իմ մէջս:
Ինծի համար նորանշան երեւոյթ մըն է տեսնել ողորմու-
թեամբ ապրող Հայեր որոնք ուրիշ մտածում չունին բայց
եթէ ժամ առաջ ազատիլ այդ նուաստացնող վիճակէն,
և որոնք իրենց չքաւորութեանը մէջ այլասիրական զգա-
ցում մը կը պահեն անոնց համար որ իրենցմէ աւելի թըշ-
ուառ են գուցէ:

Կը խոստովանիմ որ Խարբերդի որբերուն մէջ տես-
նուող այդ երևոյթը իբր բացառութիւն մը կը նկատեմ լոկ,
—սիւսփարար բացառութիւն մը անշուշտ՝ որ յոյսին գուռը
բացփփիկ կը թողու՝ ապալայ բարելաւումներու կարելիու-
թեանց վրայ,—բայց բացառութիւն մը լոկ՝ այն անարգ
ու մուրացկան բարքերուն մէջտեղ որոնք մեր աղէտնե-
րէն ետքը յանկարծ երեւան եկան բոլոր այն միջավայ-
րերուն մէջ ուր ձեռքեր կ'երկնային ողորմութիւններ
բախելու եւ լիաբաց փիեր կը կարկառուէին մուշգիտ՝ զա-
նոնք կորզելու:

Եթէ անկեղծ ու անաչառ մէկը, տեղին վրայ զգուշա-
ւոր ու մանրակրկիտ քննութիւններէ յետոյ, զրի անուէր
ու ամփոփեր բոլոր այն հաւաքական ու անհատական բար-
քութեանը զոր շունչներն իրօքապա, Ափրիկէ կամ Ամերի-
կա անոող Հայերը երևան բերին ամէն անգամ որ առի-
թը ունեցան ուրիշի օգնութեամբ ապրելու, ատիկա հա-
տոր մը պիտի կազմէր այնքան ահաւոր ու այնքան զգուե-
լի, որ մղձաւանջի մը պէս պիտի խոռվէր իր ցեղին բար-
ւոյն նախանձախնդիր ամէն հայու մտածումը:

Ու անհրաժեշտ է գուցէ այդպիսի հատորի մը կազ-
մութիւնը:

Աչքիս առջև կը բերեմ ապաստանարան մը զոր Բա-
րիզ հաստատեց մեծահարուստ Հայ մը՝ Վարդերէն ետքը
հոն ինկած Հայերուն համար: Երբեք աւելի գեղեցիկ ու
ազնիւ բաղձանք մը՝ աւելի ողբալի արդիւնքներ չունեցաւ:
Ապաստանարանը, որ ծերերու, կիներու, տղաքներու հա-
մար առաջադրուած էր եւ լոկ իբր հանգրուան մը այն է-
րիկմարդերուն համար որոնք իրենց ճակատագիրը իրենց
որոշելու սգորումին մէջ՝ իրիկուրնէ իրիկուն գլուխնին
հանգչեցնելու տեղի մը պէտք ունէին մէկ քանի օրուան
համար, քիչ ատենէն լեցուեցաւ խոնուեցաւ և բազմութեամ-
բը ոտքը—ձեռքը—բռնող երիտասարդներու, որոնք, իրենց
վիճակէն գոհ ու երջանիկ, — երջանիկ, այո՛ —, իրենց
անգործութեանը վրայ երկնցած փողած՝ փետուրի ան-
կողնի մը պէս, կ'ուտէին, կը խմէին, երանաւտ յօրան-
չումներով կը զգայուէին, ու յուլօրէն կը քնանային, ողոր-
միս չհանելով իրենց բարեբարին: Ոչ մէկը ինքզինքը
պզտիկցած կը զգար մուրացկանի մը կեանքը վարելուն,
ո՛չ մէկը շառագունանքը ունէր ուրիշի մը իրենց նետած
հացի պատառովը—որքան ալ իւզոտ ըլլար ան—ապրե-
լուն, ու ո՛չ մէկուն մտքէն կ'անցնէր, օ՛հ ո՛չ, ձգելու եր-
թալու այդ երանութեան վայրէն՝ ուրիշի մը տեղ բանա-
լու համար: Կը պատահէր որ այդ կամովին «պատուաբա-
րեալ»ներէն մին գործ մը գտնէր որ եկած ոտքը ինկած ըլ-
լար, ու տեղը ընկերոջ մը պահ տալէ ետքը՝ կ'ելլէր կ'եր-
թար ակամայ: Բայց մէկ քանի օր չանցած վազն ի վազ
կուզար իր տեղը գրաւել վերստին: Մանր գործեր տուեր
էին իրեն որոնք իր ուժը չէր բաւեր, կամ գոհհիկ ու ստո-
րին աշխատութիւններ որոնք իր արժանապատուութիւնը
չէր կրնար հանգուրծել, — իբր թէ առողջ մարդու մը հա-

մար բան մը կարենար աւելի ծանր ըլլալ քան մուրաց-
կանութեան անուրը, կամ թէ բան մը աւելի ստորնացը-
նէր մարդ մը՝ քան ձեռքը երկնցնելու տակաւն պարտա-
ւորութիւնը:

Այս հանգամանքներուն մէջ՝ պատճառ մը չկար որ
ապաստանարանը անսահմանօրէն չտնէր: Բարերարը ցա-
ւով հասկցաւ ասիկա, ու փակել տուաւ զայն: Ու իր ցաւը՝
անվախճան կոկիծի մը փոխուեցաւ այն օրը երբ այդ պա-
տըսպարեալներէն շատեր զացին իր զուրդ ափ ափին օ-
րերով, աղմկալի ու պահանջկոտ, զայնթակղութիւն մը յա-
րուցանելու պատրաստականութեամբ, մէկ ձեռքով մուրա-
լով ու միւսով ոպանալով:

Ամէն անոնք որոնք առիթը ունեցան այդ կարգի հա-
մախոնումներու ապրելու եղանակին հանդիսատես ըլլալու
արտասահմանի մէջ, այս կարգի պատմութիւններու շարք
մը պիտի ունենային մէջտեղ դնելիք, — Վառնայէն՝ ուր խո-
շոր ու հաստ մարդիկ շամշան յարձակելու խեղճ Միս
Ֆրէյզըրին վրայ որ հարկադրուած էր իր բաշխած նը-
պաստին քանակութիւնը պակսեցնելու և կիներուն, տղաք-
ներուն ու հիւանդներուն միայն բաժին հանելու, մինչեւ
Գահիրէ՝ ուր գաղթականներ կ'երթային կանչուողներու
և ողորմութիւն պահանջէր իրենց համար ամէնէն աւե-
լի աշխատած Հայու մը զրանը առջև, ճշդիւ այն գիշերը
իսկ ուր անիկա եւրոպացի այցելուներու ընդունելութիւն
մը ունէր:

Ինչո՞վ բացատրել այս երևոյթը, որ անողորմ ու ան-
զրբողելի պարոյկի մը պէս իր շարախնդաց ծամածու-
թիւնը կը ցցէ խորհող մտքերու առջև:

Ո՞վ որ քիչ շատ հետաքրքրուած է նպաստի կամ ու-
ղորմութիւններու բաշխման գործի մը ընթացքին հետևե-
լու, դիտած է անշուշտ որ նպաստը կամ ողորմութիւնը
ընդունող Հայը ու եւ է նեղութիւն չի գլար իր այդ կացու-
թեան, որովհետև այն չխոստովանուած բայց կերպերուն
ու շարժուածքին մէջ այնքան բացայայտ մտածումը ունի
ան թէ ատիկա իրեն պարտաւոր էին ընկերոջ, թէ առեւ-
դիքիւն պէս բան մըն է ատ որ իրեն կը վերադարձնեն:

Տրամաբանելու այս եղանակով, հա՞րկ է ըսել թէ ե-
րախտագիտութեան խօսքը ընելը անգամ ծիծաղելի է:
Մարդ երախտագիտ կ'ըլլա՞յ բանի մը համար որ իր իրա-
ւոյնքն ու զի մացինին պարտքը կը կազմէ:

Հէրի Պարքըլ անդրադարձնելու օրը, որ 1878ին Փոքր
Ասիան ու Հայաստանը այցելած է, Կեսարիոյ Հայ դիւղե-
րուն մասին խօսելու առթիւ՝ կը գրէ. « 1873ին և 1874ին,
Փոքր-Ասիա սովէ կը տառապէր: Միսիոնարները ամե-
նէն առաջ անցան և սկիզբէն մինչև վերջը գերիներու պէս
աշխատեցան, տիրող թշուառութիւնը մեղմելով, և կարօտ-
ներուն բաշխելով Անգլիայէն և Սկոտլանդիէն զրկուած նը-
պաստը: Հարցուցի իրենց. « Ատկից յետոյ, ժողովուրդը
աւելի լաւ չվարուեցա՞ւ ձեզի հետ: » Ու պատասխանեցին.
« Մազի թելի չափ չփոխուեցան. երախտագիտութիւնը ան-
ծանօթ բան մըն է իրենց: Երբոր մարդ մը « շնորհակալ
եմ » կ'ըսէ, զալիք շնորհներու համար է: Ուրիշ սով մը

չի վախցուիր, ուստի անողորմ կը համարին « շնորհակալ
եմ » ըսել անցած օգնութիւններու համար: »

Այո՞, աւելորդ է երախտագիտութեան խօսքը ընելը,
երբ շատեր կան որ համոզուած են թէ իրենց հոգ տանող-
ներն են որ երախտագարտ ըլլալու են իրենց: Ես որբեր կը
ճանչնամ որոնք այն կարծիքը ունին թէ իրենց շնորհք մը
կ'ընեն այն ազնիւ անձին որ իրենց խնամատարութիւնը
ստանձնած է և որ զիրենք ժողոված փողոցներէն ու որջե-
րէն, ուր կը մըլէին ու կը փակին անօթի, բոպիկ ու կիսա-
մերկ, աշխատած է զանոնք կերպաւորելու, կոկիղու, մաք-
րելու նիւթապէս ու բարոյապէս:

Մտքի ու հոգիի այս տրամադրութեանց մէջ, հասկնա-
լի կը դառնայ որ բոլոր այդ մարդիկը, տարուն թէ պատա-
նի, մուշտակի մը պէս փաթթուին՝ հաճ ու անխափ իրենց
մուրացկանութեանը մէջ, ամէն անգամ որ առիթը տրուի
իրենց, ու պահանջէր իրենց հացին պատառը եր-
բոր անիկա հեռացուի՝ ակնկալութեան մէջ անշարժա-
ցած իրենց ձեռքերէն:

* * *

Եւ սակայն հպարտութիւնը չէ որ կը պակսի մեր ցե-
ղին: Ընդհակառակը: Անուամենայնիւ խրոխտութիւն մը, հի-
ւանդութեան հասնելու չափ ցաւազին գոռոգութիւն մը կայ
է՛ն անկեալ Հայուն մէջ, զոր կարելի չէ ուր սնալ:

Ան առե՛ն...

Ի՞նչ ընել, երկու երևոյթներն ալ ճշմարիտ են, փոր-
ձուած, հաստատուած, անհերքելի, ու չըլլալիք զուգաու-
րութեամբ մը քով քովի կ'ապրին նոյն մարդուն մէջ՝ ա-
ռանց իրարու գործին խանութելու, իրենց սահմանները
գծած որոշած, ու անոնց մէջ անարգել իշխելով:

Եթէ ուզէի այս տարօրինակ հրէշութիւնը բանաձևել,
պիտի ըսէի.

— Հայերը հպարտ են... բացի միայն երբ ողորմու-
թիւն կ'ընդունին:

Տէր Աստուած, իրա՞ւ է որ զարբերու ստրկութիւնը,
օրուան հացին անվախճան ու յարանորոգ մտատանջու-
թիւնը, ապրելու տաժանքը, օրապահիկին համար բնու-
թեան եւ մարդերուն գէժ ամենօրեայ կոկիծն տարապայ-
ման սաստ ութիւնը այնքան նիւթականացուցած ըլլան
ցեղին արդէն անվիպական հոգին, որ այնքան շատ ըլլան
մեր մէջը ողորմութեան հացը գոհութեամբ ու հրճուանքով
ուտողները:

Ո՞րչափ պիտի ուզէի որ սխալած ըլլամ, ու ս՛րչափ
պիտի ուզէի հաւատալ թէ Միս Հուիլըրի մեզի ներկա-
յացուցած որբերը՝ Ամերիկայի բարեսէրներուն համակ-
րանքը ու օժանդակութիւնը վաստակելու համար հազար-
ներու մէջ ընտրուած բացառութիւններ չեն, ու թէ Եւրո-
պայի մէջ մեր տեսած կամ իմացած գաղթականներն էին
որ բացառութիւն կը կազմէին:

* * *

Պիտի գրեթէ նորէն այս հարցերուն վրայ, որոնք այնչափ կենսական են Վիզի համար, որքան մեր ապրելու իրաւունքին հետամտելու պարտաւորութիւնը: Վստահ եմ որ ինծի պէս հարիւրաւորներ են որոնք այս երկայթմերուն առջեւ կանգ առած են մասձկտ ու ցաւած: Կը խնդրեմ իրենցմէ որ հաճին Նգր Կեւեռքի միջոցաւ հրապարակաւ յայտնել իրենց կրած տպաւորութիւնը գաղթականներէն Պուլկարիոյ, Յունաստանի, Կիպրոսի, Ելիպոսի, Փրանսայի, Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ:

Որչափ աւելի զէպքեր յիշեն, որոշ ու մանրամասն, այնքան աւելի կշռաւոր պիտի ըլլայ իրենց գատումը, նըպաղատար կամ աննպատ: Բոլոր այդ իրողութիւնները հաւաքելով, քով քովի բերելով ու անոնց եզրակացութիւնը քամելով, թերեւս կարենանք օգուտ մը հանել անկից մեր ցեղին համար:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ԱՆՅԵԱԼԻ ԳԷՄԲԵՐ

ՆՈՒՐԵԱՆ

Կ'երթան: Հիմակ Նուրեանն ալ անցեալի զէմք մըն է: Այդ հոչականուն անձնաւորութեան մահուան լուրը եթէ զանազակիժ տըտուութեամբ հոգիս չհամակեց, բայց ցնցեց զիս եւ տխրեցուց: Չենք կրնար անտարբեր հանդիսատեսներ ըլլալ աներկութեամբ անոնց որոնք հանրային կեանքի երկարատեւ մարտնչութիւնով ընտանեցած են մեզի:

Այն պահուն երբ մեր ընդդիմամարտները մենէ առաջ կ'անցնին գերեզմանատան ճամբուն վրայ, մենք, յետաձնացներս, պարտականութիւն կը զգանք խղճի քննութեան մը: Կրօնաւորները կը յանձնարարեն երբեք աչքէ չվրիպել մեր մահուան օրը, « յիշեա՛ զօր մահուն »: Կ'երեւի թէ հոգին որ ծանրաբեռն խիղճ մը կը քաշկուտէ իր ետեւէն, ահարկու տազնայններու կը մպանուի զէպի անձանթը չուելու բոպէին: Ստոյղը պատմաբ չի կայ սակայն. ոչ ոք հոգեղարձ եղած է: Կարծեմ թէ յորդորականը մեզի աւելի օշտակար պիտի ըլլար եթէ յանձնարարուէր յիշել ուրիշներուն մահուան օրը: Մեր դադար չէ որ մեզի կը սարսուացնէ, այլ անճնցը զոր օրրած ենք կամ ատած: Երբ սիրելի մըն է մեանողը, մեր յիշողութեան առջեւ կը վերակենդանանայ, ինչպէս շատոնց մոռցուած յիշատակ մը երազի մէջ, էս աննշան տժգոհութիւնն իսկ զօր մեր սիրածին պատճառած ենք. այդ բոպէին դառն զղջում մը կը սաստիացնէ մեր ցաւը: Իսկ երբ մահը կ'առնէ կը տանի մին անոնցմէ զոր հալածներ ենք հանրային կեանքի կոհներու ատեն, յանկարծ խլրտում

մը կը զգանք հոգիներնուս մէջ: Արդարաւորութեան թըմը ընձազդն է որ կ'արթննայ, և կը բռնադատէ խղճմը տանքը քննութեան մը: Մեր դատաստաններուն մէջ սրխալած ենք թէ ոչ, արդեօք անիրաււ յարձակումներ քած ենք: Չեմ ճանչնար մէկը որ ինծի չափ Նուրեան է: Ֆէնտիի զէմ կուտող մը Կանդիտացած ըլլայ: Երիտասարդութեանս էս թարմ օրերէն, այն ինչ նոր գրել օկտած, մինչեւ վերջին ատեններս անդուլ անդադար կուի մղած եմ ընդդէմ այդ անձնաւորութեան, կամ աւելի ճիշդըն այն քաղաքական ուղղութեան որուն կը հետեւէր, ու հիկակ խղճիս քննութիւնը զիս ամօթապարտ չի թողուր: Հին գրածներէս բան մը չունիմ քովս, բայց կը յիշեմ մաքառումներս, անոնց պայտմութիւնները, ու չեմ գտներ շնջելու ո՛ր եւ էլէտ մը:

Նուրեան էֆէկտիկ զերը կը վերջանալէր մահովը: Ո՛չ կուսակցութիւն մը կը թողու իր ետին, ո՛չ քաղաքական ժառանգութիւն մը զձր շարունակել կարելի ըլլայ: Օրուան բերումներուն համեմատ ինքն իր հաշուին գործող մարդը եղաւ, առպնց որոշ, խորհուած ծրագրի մը: Իր կենսագրութիւնը խառնուած է մեր ժամանակակից պատմութեան, որուն մէկ զլուխը պայս էջերուն մէջ ամփոփած եմ, և այդ առթիւ ուրուագծած Նուրեանը իբր ազգեցիկ քաղաքական անձնաւորութիւն: Եթէ պատեհութիւն ներկայանայ ինծի գրել մեր վերջի տարիներու պատմութեան ուրիշ դրուագներ ևս, առիթ կ'ունենամ այդ շահագրգռական զէմքը ուրիշ երկայթմերու ներքեւ ալ ուսումնասիրելու: Այսօր պատմութեան շրջանակէն դուրս կ'ուզեմ ուրուագծել այդ կնճոտ նկարագիրը:

Թիւրքիոյ պետական ժառայութեան մէջ զանուող Հայերը նշանաւոր երկու տիպար կը ներկայացնեն, Օտեան և Նուրեան, իրարու ներհակ երկու տիպարներ որոնք սակայն հաւասարապէս դժբաղդ եղան, նման իրենց բոլոր ազգակից պաշտօնեաներուն, երկուքին ալ, ամէնուն ալ զլուխը միենոյն կոչկոճող թակին ներքեւ կըքած: Հայ ժողովուրդը կարող չէ ճշգրիտ գաղափար մը կազմել այդ պաշտօնեաներուն, ինչպէս եւ մտաւորական կեանքով ապրողներուն տառապանքին մեծութեանը վրայ: Հայը անհատի մը բարեբաղդութիւնը նիւթականի վայելման, և դժբաղդութիւնը՝ նիւթականէ զրկանքի մէջ միայն կը աշունէ: Երեսուն տարի է Պատրիարքարանէ ներկայացուած բարեկարգութեանց ծրագիրներուն մէջ մտաւորական պետքերու խնդիրը եթէ երբեք տեղ մը զբաւած է, շատ երկրորդական եղած է: Ելիզգեցին ազատօրէն աղօթելու թոյլտուութիւնը մեր մտքին ու հոգիին ամէն տենչանքները գոհացնելու բաւական կը համարուի: Կեանքի այս ըմբռնումովը Հայ ժողովուրդը կարող չէ հասկնալ Հայ պաշտօնէի մը հոգեբանութիւնը: Ու երբ կը տեսնէ Հայ մը նախարարութեան մը խորհրդակիժն, զանիկա իտէական բարեաստութեան վիճակի մէջ կը համարի: Բայց ընդհակառակն է:

Ազատ ասպարէզի մը մէջ Նուրեան ժամանակակից էս համակրելի հայ զէմքերէն մէկը պիտի ներկայանար:

Փոխանակ էֆէնտիական ֆէսին թո՛ղ վարդապետական վեղարը անցուցած ըլլար գլուխը, եւ արդի հայ պատմութիւնը մեծագոյն պատրիարքը կ'արձանագրէր: Բայց երբ ինքզինքը Դուռը գտաւ, ըմբռնեց թէ քրիստոնէին համար բարձրացումի պատուանդանը տաղանդի մեծութիւնը չէ, այլ նկարագրի ստորնացումը: Բարոյականի բնածին քաջառողջ զգացումով պնդացած երիտասարդը չէր, ուստի մթնոլորտին ապականութենէն վարակուեցաւ:

Նուրեանի հանրային գործունէութեանը ուշադիր հետամտած եմ, նկատելով այդ պետական անձնաւորութիւնը ո՛չ թէ իբր սոսկական մը այլ դասակարգի մը ներկայացուցիչը: Ճշմարիտ ազատամտութեան յատկանիշն է յարգել ընդդիմադիր համոզումները և անոնց դէմ փաստերով մարտնչիլը. բայց մտքի անկախութիւնը կը կորսնցնենք երբ կը գտնուինք հանդէպ այնպիսի անձերու ուրոնց անհատական շահերն ու քաղաքական համոզումներն ի մի ձուլուած կը գտնենք: Այդ դժբաղ պարագային մէջ դժուար է վճռել թէ անձնական նկատումները մինչև ո՛ր աստիճան պղտորած են մտքի յստակութիւնը: Նուրեանի Ազգային Ժողովին ատենանը արտասանած մէկ ատենաբանութեանը վրայ խօսելով օր մը կը գրէի թէ ինձի կը յիշեցնէ այն յոյն պերճախօսը որ ճառի մը աւարտումէն յետոյ շնորհաւորութիւններ ստացաւ, վերապահութեամբ մը ոտակայն. « Իցէ թէ այդ սքանչելի խօսքերդ պարկեշտ մարդու մը բերնէ թափէին »: Ինչպէս Նուրեանի նմանապէս պետական ծտոյալութեան մէջ գտնուող ուրիշ Հայերու ձայնը ծանր հանգամանքներու մէջ անխելի մնաց, վասն զի անոնց բարոյականը կասկածելի էր: Սերվիլէն մը, Օտեան մը ազդեցիկ հեղինակութիւն վայելեցին, պետական անձնաւորութիւններ ըլլալով հանդերձ, շնորհիւ իրենց նկարագրին՝ որ հնարաւոր կ'ընէր պաղարհնութեամբ ուշադրութիւն նուիրել անոնց կարծիքներուն եւ համոզումներուն:

Բնութիւնը օժտած էր Նուրեանը մտաւորական ձիւրքերով որոնք, ինչպէս Թիւրքիոյ Հայոց ամենաստուար մեծամասնութեան բնատուր կարողութիւնները, թիթեօրէն՝ մշակուած ըլլալով, զարգացումի գերազանց աստիճանին հասած չէին: Ազգային ժողովին մէջ այն սակաւութիւ ատենաբաններէն էր զոր անձնապէս սիրէինք կամ ոչ, միշտ հաճոյք կը զգայինք զիրենք մտիկ ընելով: Փափագեանի հետ Նուրեան էն նշանաւոր պերճախօսը մնաց 1880էն ետքը, երբ ա՛յլ Օտեան, Ռուսիան և ուրիշներ անհետացան: Յետոյ 1888ին վերադարձաւ Ստեփան փաշա Արսլանեան, սքանչելի ատենաբան մը: Նուրեանին ձայնը զօրեղ էր, հնչուն, և համակրելի, հաճոյալիբ զըրզուումներով ունկնդրին շիղերը թունդ կը հանէր: Փափագեան հրաբխային ժայթքում մըն էր, իր բոցը կը տաքընէր, կը ցնցէր ունկնդրները. Ստեփան փաշայի ատենաբանութիւնը կարկաշտուն, վճիտ առուակի մը պէս քաղցրընթաց կը սահէր. Նուրեան բազմազանութիւնն էր: Միննոյն ճառին մէջ մերթ ողորջիչ, մերթ ցասկոտ, բայց միշտ ուժեղ ատենաբանն էր, հեզնող, սպառնացող, փայ-

փայող կը հանդիսանար քանի մը վայրկեանի մէջ, ժողովին հոգեբանական կացութիւնը անմիջապէս զգալով: Բառերը առանց դժուարութեան կը բղխէին, եւ նեղ պարագային առանց վարանելու կը հայացնէր Ֆրանսերէն բացատրութիւն մը, ու յանկարծ մտքերը կը ցնցէր երևակայութեան վրայ տպաւորութիւն ձգող պատկերներով: Իր ատենաբանութիւնները միշտ յանպատրաստից արտասանուած, կը պնդազարդէր զրական նմանողութիւններով ուրոնք հասա ակ տեղիքին ռամկութիւնները չէին, ուստի անսպասելիին ազդած հաճոյքովը կը զղուէին մտքերը — սակաւութիւ սակայն:

Հոնտորը վարչական մարդ մըն էր նաև: Եթէ երբեք եւրոպական պաշտպանութեամբ ու հայ կուսակալով կառավարուող հայկական նահանգներ ստեղծուէին, երկու Հիմն միայն կարող էին կառավարչի ծանր պաշտօնը մեզի գոհացնող ձեռնհասութեամբ կատարել, Միքայէլ Փորթուզալ, Նուրեան: Բայց մինչ առաջինը հանգարա, պաղարհն, զրական մտքով ու երկաթէ ձեռքով վարիչն էր, միւսը բոլորովին եռանդ, կրակ ու բոց էր: Ու թերեւս լաւագոյն կուսակալը պիտի ըլլար, զի թմրած ժողովուրդը ոգեւորութեամբ պիտի կրնար վերակենդանացնել: Թրքական ճնշումէ ազատ, ինքնագլուխ Նուրեան մը բոլորովին տարբեր մարդ մը պիտի հանդիսանար պատմութեան մէջ: Լափիչ գործունէութիւնը զինքը կը վառէր, ու նետուած էր անգործութեան անկեղանոցը որ Պետական խորհուրդ կը կոչուի: Ազգային կեանքի մէջ էր որ կրնար իր գործունէութեան պապակին յագուրդ տալ: Բերայի թաղային մատակարարութիւնը զոր ինքնագլուխ վարեց շատ տարիներ, մեծ բարիք մըն էր իրեն համար, աշխատութեան տենչին գոհացում կուտար:

Ամէն ճշմարտապէս վարչական մարդ նաև իշխելու կորովը ունենալու է: Նուրեան իշխող մարդ էր, եւ զրեթէ բռնաւոր մը: Ուր որ պաշտօն մը ստանձնէր հոն միայն պետաբար կը հրամայէր. շուրջը գտնուողները ամենքն ալ ոչնչութիւններ կ'երևէին իր աչքին եւ պարտաւոր էին առջևը խոնարհիլ: Քաղաքական ժողովի ատենապետ՝ իր տաններեք պաշտօնակիցները կը չէրօքացնէր, եւ ընդդիմադիրները մինչև Ղարպ—Թարապուլուս աքսորել տալ կը սպառնար: Երեսփոխան՝ միշտ կը ջանար պերճախօսութեամբ շահիլ իր դատը. բայց երբ յաջողութիւնը վտանգուած նշմարէր, նախատինքն ու սպառնալիքը բռնապետաբար ի գործ կը դնէր: « Դուն լո՛ւ, նախակրթարանէն դուրս չես ելած » կը պոռար ուսուցիչ երեսփոխանի մը երեսին, որ թէև ամբարտաւան, բայց սահմակած վար կը նստէր: Ուրիշի մը՝ Նիկողոս Թիւլպէնտեան երեսփոխանին, որ զինքը օր մը շատ նեղը կը ձգէր, « Գիտե՛ս, պարո՛ն, ես մարդը կամուրջին գլուխը կախել կուտամ ». եւ խեղճ երեսփոխանը ահաբեկած, ձայնը կը քաշէր ու վար կը նստէր: Այս առթիւ կը գրէի « Մշակ »-ին. « Ազգային ժողովը հիմակ իր Ռոպէսթիէրը ունի »: Բերայի թաղային խնամակալութեան իր մէկ մեծ զուլու պաշտօնակցին, որ քիչ շատ ունեւոր ըլլալուն կը համարձակէր դիտողու-

Թիւններ ներկայացնել, երեսն ի վեր բարկութեամբ կը դուռնէր. «Աս ահագին գլուխը վրայ կրած միջոցիդ չլսօսիս նէ աւելի աղէկ կ'ընես», ու մարդուկը հրամանին հպատակելով խալածը կը խոնարհեցնէր եւ կը պապանձէր: Քիչ շատ մտաւորական մը կրնար համարուիլ, ուստի եւ Պոլսոյ հարուստներուն դէմ արհամարհանքով լեցուած էր. «Դուք, կը յայտարարէր անոնց, ազգային գործերու մէջ կարծիք յայտնելու իրաւունքն անգամ չունիք. ձեր պարտականութիւնը ստակ տայն ու լռելն է: Դրամը ձեռնէ, խելքը մենէ:» Եւ սակայն Նուրեան հանրային կարծիքէն էն շատ վախցող մարդը եղաւ: Իր այդ երկիւղը կը հաստատէ թէ իրապէս մեծ պետական մարդու մը յատկութիւններէն զուրկ էր, եւ թէ համոզուած չունէր որ գործերը օր մը իր փառքը պիտի հոչակէին, ուստի եւ կ'ուզէր օրը օրին իրեն հետ հաշտ պահել հանրային կարծիքը. վերջէն ինչ կ'ըլլար թող ըլլար: Բայց օր մը իսկ չկրցաւ սիրաշահիլ հայ ժողովուրդը, ու իր քաղաքական ո՛ր եւ է ձեռնարկը օգուտ մը չընձեռեց ազգին որպէս զի յաջողութիւնը իր արդարացումն ըլլար:

Նուրեան կիսատ մնացած մարդը եղաւ. երբեք չկրցաւ առաջնակարգ դիրք մը զբաւել ո՛չ ազգային, ո՛չ կառավարական ասպարէզներուն մէջ, ո՛չ ալ ընկերական կեանքի մէջ: Իբր Հայ՝ Օտեանի նման հեղինակութիւն մը չը հանդիսացաւ. իբր կառավարական մարդ՝ միշտ յուսախաբ մնաց. իրմէն ետքը Դուրը մտնող Հայեր որոնք իրեն կարողութիւններովը օժտուած չէին, կը յառաջանային պաշտօններու մէջ, իրենց աստիճանները կը բարձրանային, ու ինք դանդաղ դանդաղ անոնց ետեւէն կ'երթար. իբր ընկերութեան մարդ՝ չափաւոր նիւթական կարողութիւն ունէր եւ ուրիշ հարուստներու նման չէր կրնար յոխորտալ:

Նուրեանի վախճանը եղբրական եղաւ, իր տեսակին մէջ եզական: Այդ մարդը որ միշտ իսլամներուն փարեցաւ, ճակատագրին ահարկու մէկ հեղինակութեամբը իսլամներու գրկին մէջ խելակորոյս ինկաւ: Թիւրք ոստիկաններու խշտիներուն մէջ հոգեվարք մնաց եւ Թիւրքերն են որ իր գրեթէ անշնչացեալ մարմինը կը յանձնեն իր ընտանիքին:

Վերջին քսան տարիներու մէջ երկու անձնաւորութիւն գերիշխան ազդեցութեամբ տիրեցին Թիւրքերոյ Հայոց հանրային կեանքին վրայ, Մագսուտ Սիմոն պէյ եւ Նուրեան Յովհաննէս Էֆէնտի: Երկուքն ալ երբեք չուզեցին ազգին սրտին բաբախումներուն ականջ դնել: Կարծեցին թէ ինչպէս իրենց վեհապետը կը վարուի իսլամ ժողովրդին հետ՝ նոյն և իրենք կարող են գերազոյն արհամարհանքով մը հայ ազգը ոչնչութիւն համարիլ. բայց չզգացին թէ սուլթանին եւ իրենց միջեւ տարբերութիւն մը կար: Իսլամին համար իր սուլթանը գերազոյն մարդն է, կրօնքի մը մարմնացումը, աստուածային երևոյթը: Տղէտ կամ դիտուն, չար կամ բարի, տկար կամ ուժեղ, խալիֆա սուլթանը իսլամին աչքին մարդ մը չէ այլ գաղափար մը: Իրենք, բան մը չէին ներկայացնել: Իրենց միակ ուժը, իրենց պոյութեան միակ պատճառը իրենց

խելքը եւ բարոյականը պիտի ըլլար: Խելք չունեցան, վասն զի բարոյական չունեցան, ու հալածուած ապրեցան, հալածուած մեռան: Իրիկուան մութին օժանդակութեամբը հաղի թէ կարելի եղաւ գաղտագողի գերեզման տանիլ Մագսուտ Սիմոն պէյը, ու Նուրեան թիւրք ոստիկանութեան խշտիներուն վրայ հոգին կուտայ: Պատմութիւնը գիրենք հանդիստ պիտի թողո՞ւ:

Իցէ թէ այդ շիրիմներէն ողորմուկ ձայն մը Պատրիարքարանի արդի դիկատորներուն ականջին հծծէր. «Յիշեցէք մեզի, յիշեցէք մահուան օրը»:

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՅՐԻՆ

Դէպի լեռ տանող քարոտ, խորտուքոտ արահետէն՝ յոգնած դադրած՝ կ'երթար Հայկանոյշ, երկար ատենէ ի վեր: Կոնակը տղեկ մը շալկած էր, հատ մըն ալ թեւերուն մէջ զրկած, ու քովն ի վեր, փէշերէն կախուած, կը քաշկռտուէին ուրիշ երեք տղաք, որոնք ա՛լ քաշկռտ տաժանքին տոկալու չափ մեծ էին: Պա՛ղ՝ զեկտեմբերի՛ հովը կը փչէր բարձունքէն, կարծես վանելու, անպթօրէն վանտելու համար դէպի հոն դիմող խումբը: Սարսափն ու աւերմունքը սակայն, որոնք հայածական քշած էին Հայկանոյշը լեռան ճամբուն մէջ, այնքա՛ն ահոնջի եղած էին որ հոս վուն սպանալիքին մտիկ չէր ընկերան հիմակ ու կը շարունակէր տաժանագին վերելքը:

Չինը պատանքած էր չորս կողմը տարածուած մեռելութիւնը. հովը, հետզհետէ աւելի պաղ, կը ճանկըռտէր, կը խոցէր Հայկանոյշի մեր ոտքերը, բայց անիկա կը քաշէր միշտ, տեղ մը հասնելէ աւելի՛ տեղէ մը փախչելու յամառ մտադրութեամբ:

Վարը, հեռուն, գեղերու աւերակներ, ձիւնին տակ, հսկայ, ճերմակ դամբարաններու պէս կը ցցուէին, ու կանաչորակ ժապաւէն մը, սառած գետակը, չարաշուք անշարժութեամբ կը բոլորուէր անոնց շուրջը:

— Ո՛ր կ'երթանք, ե՛րբ պիտի հասնինք, կը հարցունէին, ատեն ատեն, Հայկանոյշի քովէն գացող տղաքը, իրենց զահանգած գլուխը դողն ի դող վեր աննելով:

— Չեմ գիտեր...

Ու շնչասպառ, ցրտասարսուռ, խումբը իր գեղերոտ, աննպատակ վերելքը կը շարունակէր, արհաւիրքէն հալածուած ու հովէն վանտուող:

— Անթի ենք, մայրի՛կ:

— Քաշեցէ՛ք...

Չէ՛, ա՛լ չէին կրնար: Շատ ատենէ ի վեր կը քաշէին այդ գծնդակ ճամբուն մէջ երեք պղտիկները. մութը կը սկսէր ու պիտի չհասնէին տեղ մը...

Կամաց կամաց գծկամակութեան հեծկլտանքներ, բու

դոքի փսիսուքներ սկսան լսուիլ Հայկանոյշի շուրջը: Տը-
ղաքը կ'ընդլզէին:

— Ա՛լ չենք երթար, բաւական է, բաւական...

Բայց անիկա կը շարունակէր՝ անընդհատ՝ իր գնաց-
քը, արինոտ ոտքերով, ցուրտ ու տխուր ճամբուն վրայ: **Մ**ութը կը թանձրանար ու հովը ա՛լ աւելի կատարի
կը մանչէր բարձունքէն:

— Գոնէ մօտեցանք... պատասխանէ՛, մայրիկ:

— Չեմ գիտեր:

Իրա՛ւ չէր գիտեր: Կը քալէր, կը փախչէր երկա՛ր,
չա՛տ երկար ատենէ ի վեր, ու չէր գիտեր թէ ո՛ր պիտի եր-
թար, ո՛ր պիտի հասնէր:

Տղաքը ա՛լ կտոչեցան իր քղանցքին, իր ոտքերուն, ու
այս անգամ իրենց շարձարուած, հոգեվարք էութեան բո-
լոր ուժովը պոռացին.

— Չէ՛, բաւական է, ա՛լ չենք կրնար... չենք ուզեր քալել:

Հայկանոյշ վերջին ճիգ մը ըրաւ.

— Երթա՛նք մեր ճամբէն, տղաքս:

— Չէ՛, չէ՛, չէ՛:

— Միտք բերէ՛ք ձեր տեսածները... աւերմունքը, սար-
սափն ու արինը որոնցմէ կը փախչինք:

— Չէ՛, չէ՛:

Իր զաւակներուն ապստամբ կամակորուծեան դիմաց՝
Հայկանոյշի ձեռքերը թուլցան, զողա՛ջ ծունկերը ջուրի
պէս հալեցան, ու յաղթահարեալ ինկաւ անոնց քովը,
գետնին վրայ:

Հիմակ հովին սարսուռները սև ստուերին մէջ կը վազ-
վզէին ողբովայի ճիչերով, տազնապի ու անձկութեան
կերկերութեամբով:

Փոքրիկ խումբը, սառած, սասանած, ձիւնին վրայ սո-
ղոսկելով գնաց ապաստանիլ խոռոչաւոր ապագածի մը տակ:

Տղաքը կծկտեցան իրենց մօրը քով, կուրճքին, թե-
ւորուն, ոտքերուն պլուեցան, ի զո՛ւր անոր սառած մալմ-
նին տաքութիւնը հայցելով, ու զողահար, սարսափին,
հարցուցին.

— Ըսէ՛, մինչև ե՞րբ պիտի փախչինք, ինչո՞ւ ձգեցինք
մեր տեղը, ինչո՞ւ մեզի կը հալածեն, ինչո՞ւ վարը արին
կայ ու հօտեղ ցուրտ... անթի ենք, յոգնած ենք, կը
շարձարուինք, ինչո՞ւ, ինչո՞ւ...:

Այն ատեն Հայկանոյշ առաւ համբուրեց ամէն մէկը
իր զաւակներուն և ըսաւ.

— Հո՛ն վարը, ես էի տէրն ու իշխանուհին բոլոր այդ
գեղերուն, քաղաքներուն, գետերուն ու դաշտերուն: Ա՛խ,
երբոր անոնք իմա էին, քաղքին մէջ սուրով՝ ու դաշտին
մէջ սուլէն չէին մեռնէր. քորձեր հագած խելայից փա-
խստականներ չկային ճամբաներուն վրայ. անօրէնութի-
ւնը, անարգանքն ու դարձութիւնը չէին պղծեր զանոնք,
ու պատուհասն ու կործանումը իրենց սրտմտութիւնը չէին
թափեր անոնց վրայ...: Ու ահա՛՛ եկաւ Չարիքը, մեծ,
անդիմադրելի, վախճանական Չարիքը: Կապեցին, կաշ-
կանդեցին ու յետոյ լլկեցին իս անխնայ: Ու ամենքը իս
մերկացուցին, բռնաբարեցին, ո՛չ թէ զգուանքով ու սիրով,

ո՛չ թէ տարփանքէ մղուած, այլ ատելութեան, անար-
գանքի համար: Իրենց ոտքերովը փորս, կուրճքս, ծի-
ծերս կոխկրտեցին, ու անանկ լլկեցին, և իրենց անարգան-
քին իբրև վարձք՝ քաշեցին փրցուցին թեւերուս ապարան-
ջանները, պարանոցիս մանեակը, ականջիս օղբը ու
զխուս պսակը, վիրաւոր, արինըլուայ գետին փռելով իս:
Ու շարձարանքին տակ տղեղցայ, փտեցայ, ապականե-
ցայ. հիմակ ա՛լ ես ինձի համար դարձելի ու ատելի եղայ,
ա՛լ չեմ ուզեր մեալ, ա՛լ չեմ ուզեր ըլլալ... բաւական է...
յոգնած եմ, զգուած եմ:

— Անթի ենք, կը մտնէք, զոչեցին տղաքը պաղա-
տազին:

— Չունիմ... հաց չունիմ, զգեստ չունիմ... բան մը
չունիմ:

— Ա՛խ, կը մեռնինք կոր...

— Չունիմ:

Տղաքը շարձարանքով ու վախով լեցուած իրենց աշ-
քերը վեր առին, նայեցան Հայկանոյշին, որուն կմախա-
ցած ցուրտ երեսը կեանքէ լքուած բանի մը ահօնի կեր-
պարանքը առած էր: Իր մազերը, որոնց վրայ ձիւնը սա-
ռած էր, ճերմակ արծաթագոյն օձերու խուրձի մը պէս վար
կը կախուէին ծոծրակին եւ ճակտին շուրջը: Յսւատանջ,
դժնէ ու տղեղ էր անիկա, անդամանելի դժբախտութեան
մը, անհուն տառապանքի մը պէս:

— Ախոս՛ս, բան մը չունիմ ձեզի տալու, շարունա-
կեց Հայկանոյշ, ո՛չ հաց, ո՛չ զգեստ, ո՛չ պատսպարան
և ո՛չ իսկ յոյսի կտոր մը... սուտ, խաբեբայ յոյսի կտոր
մը: Պատուհասը շատ մեծ է, շարիքը շատ զօրաւոր, ա՛լ
չեմ ուզեր սպասել, չեմ ուզեր յուսալ... յոգնեցայ՝
վախճանը թո՛ղ գայ, վախճանը թո՛ղ գայ, աղաղա-
կեց, մեծ ու յախտեանական վախճանը, մահը իմ ու
ձեր վրայ, մեր ամենուս վրայ: Յաւին ու հեծութեան,
արինին ու անթութեան, մերկութեան ու պղծու-
թեան և արհաւիրքին վախճանը, կատարեալ ոչնչա-
ցումը, ամբողջական անէացումը: Այո՛, վերջնական չա-
րիքը դատարկութեան, մոռացումին, աներևութացման.
մեծագոյն շարիքը ու ջախջախիչ դարձանը միւս ամէն չա-
րիքներուն... փրկարար, ժխտական շարիքը...:

Այն ատեն տղաքը նորէն ապստամբ կամակորուծեամբ
վեր առին իրենց զուլսը.

— Չէ՛, չենք ուզեր մեռնիլ:

— Ո՛հ, գերեզմանի հանգիստը, խաղաղութիւնը, ըր
լլկուելու, չկոխկրտուելու, շանարգուելու, շտառապելու
կարելիութիւնը... մի՛ մերժէք: Հո՛ն պիտի ազատինք նա-
և կարեկցութեան ու գթութեան առարկայ ըլլալու դառնա-
դոյն թշնամանքէն ալ:

— Չէ՛, կրկնեցին տղաքը, չէ՛, պիտի չմեռնինք. մենք
ապրիլ կ'ուզենք, մենք կ'ուզենք քու արինըլուայ անդամներդ
մաքրել, խոցերդ ամօքել, բժշկել, մինչև որ ա՛լ անոնց
նշանը չմնայ, մեր համբոյրներովը տաքցնել, վերակեն-
դանացնել սառած մարմինդ, ապարանջաններդ, օղբերդ,
մանեակդ ու զխուպ պսակը քեզի դարձնել, մազերուդ

վրայն սրբել ձիւնը, սրունքներուդ ու թեւերուդ կլորու-
թիւնը, որովայնիդ շնորհքը բերել, ոտներդ նորէն
ածեցնել, նկարագործ հանդերձներով, բեհեզէ գոտինե-
րով ու մետաքսէ զարդերով ծածկել քեզ: Ու այնչափ
սիրել քեզ որ նորէն զեղեցկանաս, ա՛լ աւելի թարմ, ա՛լ
աւելի հրապուրիչ, ա՛լ աւելի կուսական զեղեցկութեամբ մը:

Ու տղաքը անհուն աղապատանքի փարուսով զրկեցին
Հայկանոյշը, աղաղակելով.

— Ապրի՛նք, ապրի՛նք:

Ե. Օ.

ՕՐՈՒՍԱՆ ԿԵԱՆՔԸ

Լուստոն, 10 մարտ 1900

Օրուան մարդը: — Հերետիկոսաշքեան ասուակոչարիւն-
ները: — Ջնշուշիք բասեր: — Տարեցոյց մը:

Պոլսական քանի մը թերթերէ որոնք զիպուածով ձեռ-
քըս անցան, տեղեկացայ թէ հոն օրուան մարդը Եւտի-
բէան է: «Եւտիբէ», ա՛ն ո՛վ էր» կը հարցնէի ինքնիրենս,
հին անուններու խոսնին մէջ փնտռուիցիս յիստու-
թեամբ: Ու կամաց կամաց սկսան յիշողութեանս առջեւ
ստուերազօիլ յիշատակներ, հին, շատ հին: Ահա թա-
ղային դպրոց մըն եմ, Օրթագեղի թարգմանչաց վարժա-
րանը. ծերունի պատուելի մը, քրիստոնէական վարդապե-
տութեան գասեր աւանդած ատեն, «ա՛խ ան նզովից ար-
մատ Եւտիբէսը» կը բացազանչէ, զայրոյթէն դողդահար:
Ինչո՞ւ պս տուելիին բարկութիւնը, ինչո՞ւ Եւտիբէսը «նզո-
վից արմատ»: Տասը—տասուերկու տարեկան տղու մեր
ուղեղները շատ պզտիկ կին այս հարցումներուն խոշոր պա-
տասխանները պարփակել կարենալու համար: Փոքրիկ ե-
կեղեցի մըն ալ կար այդ դպրոցին բով. օր մը քահանայի
ձեռնադրութիւն կը կատարուի. եպիսկոպոսը տէրտէր-
ցուի կը հարցնէ, «Նզովի՞ս զԵւտիբէսն որ ասեր թէ...»,
ու մինչ մենք արմուկով իրար կը հրժշակէինք, «ան էր,
պատուելիին մարդը», խմբերգն ալ «անաթեմա՛, նզովեա՛լ
եղիցի»ն հանդիսաւորապէս կը դաւանէր. եւ ապագայ տէր
հայրը արձագանգ կուտար, առանց մենէ աւելի զիտնալու
թէ ո՛վ էր ատ Եւտիբէսը, ի՛նչ ըրած էր իրեն, ինչո՞ւ կը
նզովէր: Չեմ կարծեր որ մինչեւ այսօր ալ երբեք հետա-
բերէիր եղած ըլլայ իմանալու նզովքին շարժառիթը: Տա-
րիներ անցան. վենետիկ Ռափայէկեան վարժարանը կ'ա-
շակիրտեմ. կիրակի իրիկուն մը դաստիարակութեամբ վերա-
դարձած մտեր ենք անօրէն հօր սենեակը ուր զրադարա-
նին առջեւ զիգուած են Գիրմանացիի մը եկեղեցական
պատմութեան նորատիպ հատորները. ու տնօրէնը, Հ.
Ալիշան, զայրազին կ'ընէ մեզի. «Աս ի՛նչ պնդագագածներ
են. չեն սորվիր թէ Հայոց եկեղեցին եւտիբական չէ. այս

զրպարտութիւնը միշտ կը հերքուի, միշտ ալ կը կրկնուի:»
Ընկերներս որ լուսաւորչական վարժարանի մը նախա-
դուէն անցած չէին վենետիկ գալու համար, բան մը չը
հասկցան այդ զայրոյթէն որ իմ աչքերուս առջեւ կը բերէր
Պարպէրեան Աւետիս պատուելիին ցատուժը և ձեռնադրու-
թեան արարողութիւնը: Այդ օրէն ի վեր երեսունէն աւե-
լի տարիներ անցան. շա՛տ բաներ պատահեցան, Հայոց
կեանքը յեղաշրջեցաւ, մտածելու այնքան բաներ ունէինք
որ Եւտիբէսը ա՛լ օր մը մտքերնիս չէր ինկած. և ահա այդ
շատոնց մոռցուած անունը հիմակ մէկէն ի մէկ զլմերնիս
կ'ելլէ «աւաղիկ եմ» գոչելով:

Այդ ձայնը երբ կը լսեն՝ կ'ահաբեկին հիններն ալ, նո-
րերն ալ: Սերունդէ սերունդ փոխանցուած երկիւղը ա-
րիւնի ժառանգական հիւանդութեան կը դառնայ: Եւ ահա
Պոլսոյ Հայերը պէտք կը զգան Եւտիբէսի դէմ զօրեղ ինք-
նապաշտպանութեան մը: Օրագիրները աղմուկի շեփորը
կը հնչեցնեն. խմբագրականներով հրաւեր կը կարդան
կրօնական ժողովին ըմբռնել եւտիբական խնդրին մէջ Եւ-
րոպայի առջեւ Հայաստանեայց եկեղեցոյն սպանացող
ահաւոր վտանգը և ըստ այնմ կատարելիքնց վրայ ծան-
րացած պարտականութիւնը, «եւ ոչ թէ կարեւորութենէ
«զուրկ գատելով ամէն բան՝ բախտին կամ ճակատագրին
«թողուլ Հայ. Եկեղեցոյ պաշտպանութիւնը:»

Մտքէ չանցնելիք զիպուածի մը, կամ թէ՛ արկածի
մը, հետեանքն է հակաեւտիբական խնդրին վերածնունդը:
Փրանսացի տպագրիչ մը, Հաշէթ, հայ ազգն ալ իբր օրուան
նորութիւն մը համարելով, տեղ մըն ալ մեզի կը սպրդեցնէ
այս տարուան իր Բարիգի տարեցոյցին մէջ: Ու մեր կրօ-
նական ծագումին վրայ բան մը ըսելու հարկին մէջ զըտ-
նուելով, յօղուածագիրը կը դիմէ եկեղեցական պատմու-
թեան մը որմէն կը տեղեկանայ թէ մենք եւտիբական ենք
եղեր: Հաւանական է որ Հաշէթի աշխատանքն ստացողները
անոր մէջ աւելի բարիզեան նորոյթներ եւ առօրեայ կեան-
քի պիտանացու տեղեկութիւններ փնտռեն քան թէ Հա-
յոց դաւանանքին ի՛նչ ըլլալը ուզեն իմանալ. նորէն մենք
ու մերոնք պիտի ըլլանք կարգացողը, իմացողը, հասկցողը
կամ թէ չհասկցողը: Հաշէթի սխալը մեր ազգային ճա-
կատագրին վրայ ո՛ր եւ է ազդեցութիւն չի կրնար ունենալ,
բայց Պոլսեցիներուն արիւնը քիչ մը մտրակուածի պէտք
ունի, ո՛ր եւ է կոխ, վէճ, ժողով չկայ, ինքճերը մտա-
զրազուածի մը կը կարօտին, եւ ահա Եւտիբէսը յարմար
ատենին կը հասնի:

Բայց ի՛նչ ըրած է մեզի այդ խեղճ Եւտիբէսը, ի՛նչ
կ'ուզենք իրմէն: Այս հարցումին որոշ պատասխան մը
տալու պիտի տկարանայ ո՛ր եւ է Հայ: Վերիվերոյ զիտ-
ցածս էթէ ասիկ տասնըչորսուկէս դար եւ քսնի մը ամիս ա-
ռաջ խուսմը մը բարի մարդիկ, որ ո՛ր եւ է մտմտուք չու-
նէին, տեղ մը հաւաքուելով կ'ուզեն լուծել ինչպիսի մը որ
աւելի թուաբանական էր քան թէ կրօնական: Մէկ թէ
երկուք, ահա ինչ որ այդ բարի ծերուկները կ'առաջադրէին
ճշդիւ: Գործը շատ դժուար չէր. թիւը ճշդութիւնը ինքն է,
ըսեր են. և արդարեւ՝ ինչ որ երկուք, մէկ չէ. ինչ որ մէկ

է, երկուք չէ. ուրեմն քանի մը բուսկի մէջ կարելի էր որ ընդ մէկը կամ երկուքը: Բայց ահա ո՛ր կը սկսի կնճուտութիւնը: Սչքի հիւանդութիւն մը կայ որմէ նեղուողն. բուն համար ընտանեկան փափկանկատ բացատրութեամբ մը «անուշ նայիլ» կ'ըսեն, ինչ որ կը նշանակէ թէ անուշնայողին տեսութեան ճշգրտութիւնը երաշխաւորեալ չէ: Այդ հիւանդութիւնը ունեցողներէն ումանք զոյգ կը տեսնեն, այսինքն՝ ինչ որ մէկ է երկուքի ճեղքուած կ'երեւի իրենց աչքին. կան ալ որ անջատ անջատ իրերը ի մի խառնուած կը նշմարեն: Գրեթէ բոլոր Եւրոպայի կը յայտարարէին թէ ինք չլակնեայ է, երկու զատ զատ ամբողջութիւն մէկտեղ ձուլուած կը տեսնէ: «Ներողութիւն, շիւղ զօրք էք, կը պատասխանէր Եւրոպայ, մէկը երկճղած կը տեսնէք:» Արդ՝ երկտեսեանները մեծամասնութիւն կը կազմէին, ուստի առանց ո՛ր է զժուարութեան վճռեցին թէ շիւղ Եւրոպայէն էր և ոչ թէ իրենք: Գուցէ իրաւունք ունէին, բայց պատճառ մըն ալ չի կայ ենթադրելու թէ չլակնեալ իրենք չէին: Հազար կոյր մէկտեղ զալով երբ վճռեն թէ երկու աչքերովը տեսնողն է կոյրը եւ ոչ թէ իրենք, խորհրդարանական սկզբունքներու համաձայն պէտք է անսխալ համարուին. «Աչք բազմաց աչք Աստուծոյ»: բայց վճիռը պարտաւորիչ չէ զրաւն զիտողներուն համար: Խնդիրը ուրեմն հոն է թէ շիւղ Եւրոպայէն էր թէ հակառակատեսները: Մենք Հայերս զատաւոր չենք կրնար ըլլալ, զի «ի լսողաց» ենք միայն: Այդ պահուն մէկի, երկուքի խնդրէ մը անելի կարեոր հարց մը կը ներկայանար մեր առջեւ, ազգային գոյութեան հարցը: Մեր կաթողիկոսը, որ Յովսէփ կը կոչուէր, մեր բահանները որ Ղեւնդեանք ճանչցուեցան, Բիւզանդիոն երթալով շաղփաղրութեամբ ժամանականցընելու վիճակի մ.ջ չէին. կը կը պատրաստուէր յունիս Չը, որ մեր պատմութեան մէջ Վարդանանց պատերազմ կը նշանակէ. Աւարայրը մեզի համար, և կարծեմ քրիստոնէութեան համար ալ, Բաղկեղոնէն անելի մեծ նշանակութիւն մը ունենալու էր: Բայց ըստուած է թէ «բացականքը միշտ յանցաւոր են»: Հայերը Բաղկեղոնի ժողովին չմասնակցեցան, ուրեմն ներքնապէս միատեսեան են, այսինքն Եւրոպային յարած:

Սակայն չեմ կրնար գիտնալ թէ ինչ շարքէ կրնար զալ հայ ազգին զխուն եթէ Եւրոպայի վարդապետութիւնը մեր նախահայրերէն ճշմարտութիւն հոչակուած ըլլար: Կը կարծեմ թէ քրիստոնեայ միւս եկեղեցիները երբ մերինը հերետիկոս կը յայտարարեն, բարեկամական ծառայութիւն մը կը մատուցանեն մեզի, առանց գիտնալու: Ո՛ր է կըրօնը նպատակի մը համար իր ունեցած օգտակարութեան չափովն է ճշմարիտ: Հայ եկեղեցին հզօրապէս սատարած է հայ ազգայնութեան պահպանումին. իր զաւանանքները որքան անելի հակառակին ուրիշ եկեղեցիներու վարդապետութեանց՝ այնքան անելի ամուր պատուար կը բարձրանան ի մի ձուլման վտանգին դէմ: Եւրոպականութիւնը անանցանելի անգունդը պիտի ըլլար ընդ մէջ Հայ, ուստի «բոյր» եկեղեցիին որմէն կը վախնանք մեզի համար էն մեծ վըտանդը Ռուսիոյ յաղթանակներէն:

Ապահովութիւնը միշտ հերետիկոս ճանչցուելու մէջ փնտրելու ենք, միշտ ուրիշներուն օտարոտի մնալով է որ պիտի կրնանք մենք մեզի պաշտպանել: Օր մը Ներսէս Աշտարակեցիին կը հարցնէին թէ «Ի՞նչ պիտի ընէր եթէ ուսաց Էջմարցը մէկի նետելով ճերմակ վեղարը սև գոյնովը զնէր որպէ՛ս զի Հայոցմէ շատ շտարբերելով կարենար զիրացնել երկու եկեղեցիներուն միութիւնը:» «Ես ալ, կը պատասխանէր ճերմակի կաթողիկոսը, սեւը մէկի կը նետեմ, ճերմակը կը գնեմ:»

Հայ ազգը միշտ տառապել է Եւրոպայէն ուղղափառ ճանչցուելու հիւանդութենէն: Բժշկութիւնը սրբան դիւրին էր պարզ հարցումով մը. «Ո՞վ է ուղղափառ Եւրոպայի մէջ:» Եւ արդարեւ երբ կը փափաքէր որ Եւրոպան մեզի ուղղափառ ճանչնայ, պէտք չէ՞ որ փնտռենք թէ ո՛ր կը գտնուի այն եկեղեցին որ քրիստոնէական պայմանագրեալ ճշմարտութեան մը միակ աւանդապահը նկատուի, եւ որ իրաւունք ունենայ յանուն համայն քրիստոնէութեան մեզի դէմ հերետիկոսի վճիռը արձակել, կամ ուղղափառի վկայականը շնորհել: Վատիկանը կը ներկայացնէ այդ գերագոյն իշխանութիւնը: Հարցնենք բողոքականութեան և յունաղաւանութեան, քրիստոնէութեան այդ երկու մեծ զանգուածներուն, որոնց աչքին լուսաւորչականութիւնը թերեւ ուղղափառ համարուի բաղդատմամբ կաթողիկոսութեան: Հոռի եկեղեցիին զգալի տարբերութիւն մը չի տեսներ յունաղաւանին ու բողոքականին միջև. երկուքն ալ հերձուածող, երկուքն ալ հերետիկոս: Բողոքականը հեթանոսութեան ազգական կը համարի թէ՛ յոյնը, թէ՛ կաթողիկոսը: Իսկ յոյնին համար ոչ մէկուն հօգին պիտի փրկուի առանց տակաօին մէջ մկրտական լրագնքի մը: Իսլամը, լուսաւորչականը, կոստայտը, կաթողիկոսը, անաստուածը, բողոքականը ամենքն ալ մէկ ջրով պէտք է լուացուին: Ահա այն ուղղափառ քրիստոնեայ Եւրոպան որուն վաւերացնել տալ կ'ուզենք Հայոց ուղղափառութիւնը:

Ա՛խ, այդ «ուղղափառ» բառը, զոր չեմ գիտեր մեր ո՛ր վարպետ թշնամին հնարած է, ի՞նչքան ահեղ չաբիքներ բարդած է մեր զխուն: Երբեմն «յանուն քրիստոնէական ուղղափառութեան» բաժան բաժան եղանք եւ իրար հալածեցինք. հիմակ ալ «յեղափոխական ուղղափառութիւն» է որ կը շորթէ Հայոց խելքը, հերետիկոս յեղափոխականները ունինք, ուղղափառ յեղափոխականները: Ընդհանրապէս ժողովուրդները բառերով կը կառավարուին, բայց չեմ գիտեր ժողովուրդ մը որ Հայոց չափ բառերով խելացնորի, բառերով ապականուի:

Իսկ երբ մի օր, մի ժամ, մի յուպէ
Աստուած շիւնի մեր հողագետին

առաջին արարքներէս մին պիտի ըլլար Հայոց լեզուէն անհետ ջնջել շարք մը բառեր, զորոնք հիմա չեմ ուզեր մանրամասնել հոս, բայց որոնց մէջ պատուոյ տեղերէն մին պիտի բռնէր «բարին», իր բոլոր ածանցներովը, բարգոյնութիւններովը մէկտեղ՝ բարբարոս, բարեսէր, բարեգոյն,

բարեսիրտ, բարեգործ «բարի»ներու երկայնաձիգ շարքը ամբողջապէս կ'անճիտէի :

Երբ աչքիս կը զարնէ կամ ականջիս կը հնչէ «ազդիս բարերարները» հասարակ-տեղիքը, անմիջապէս կը կարծեմ տեսնել վերջ մը որուն վրան, տակը, չորս կողմը որդերը կը վիտան, ամենքն ալ անոր ապառնոյթն անանելով: Այդ որդերը պարարտացնող մեծագոյն վերքը, ազդին կողերուն մէջ խորամուխ, կ. Պոլսոյ Ազգային Հիւանդանոցն է: Եւրոպական նմանօրինակ հաստատութիւնները կրնաք բաղդատել մեր այդ հաստատութեան հետ: Ուրիշ երկիրներ անհատական աղէտներն են որ հիւանդանոցներու մէջ ապաստանարան կը գտնեն. իսկ երբ Ս. Փրկչի զանէն ներս կը մտնեն՝ կը սարսփնք ի տես մեր պանդուխտներուն, և ինքնիրեննիս կը հարցնենք. ինչո՞ւ այդ թշուառները այդ մահիճներուն վրայ. ինչո՞ւ այդ կտրիճները իրենց բարեբեր զաշտերը, արգասաւէտ արտերը, ողկուզալիբ այգիները թողած, ուր բարեբաստի՛ պիտի կրնային ապրիլ, եկած ինկած են խանութի ուրիշ հիւժուած, հալած, մաշած կը նետուին Հիւանդանոցը, այդ դէպի գերեզման հանգստաբարը: Իբր պատասխան այս հարցումին Հայուն աչքին առջեւ կը ներկայանայ արիւնի մէջ ողողուած երկիր մը, հեռաւոր Հայրենիքը: Ա՛յնքան երջանիկ ըլլալու համար ստեղծուած աշխարհ մը, այնքան զբաղղ. Դ սրձեալ «ինչո՞ւ» հարցումը: Հայրենասիրական տրտմութեամբ լեցուած հոգիով մը Հայը այդ «ինչո՞ւ»ին ալ պատասխանը փնտռելու է: Ու այդ պատասխանը որոշ է, եւ կը դժէ Հայուն առջեւ իր պարտականութիւնը: Բայց ինչպէս աստուածաբաններէ ոմանք կը յայտարարեն թէ տեղեկեցը ստեղծուած է մարդկոչուած արարածին վայելմանը համար միայն, նմանապէս Պոլսոյ Հայերն ալ կը կարծեն թէ Ազգային Հիւանդանոցը հիմնուած է իրենց սնապարծութեանը ոնունդ տալու համար միայն: Դիպուածով է որ Պոլսոյ թերթ մը երբեմն ձեռքս կ'իյնայ, ու միշտ կը տեսնեմ պըզտիկ որդերը որ Հիւանդանոցին շուրջը կ'եռան կը գեռան: Այդ որդերը զոր առանց խոշորացոյցի կրնանք տեսնել, բազմատեսակ են. մէկ երկուքը կը ներկայացնեն:

Ժամանակին, ամուսնութիւնը անհատական կեանքի սովորական գէպը մը կը համարուէր: Կարգուողներու ընտանիքները հրաւիրականեր կը զրկէին բարեկամներու ու ազգականներու որպէս զի մասնակցին իրենց ուրախութեանը: Երբ Պոլսեցիները քաղաքակրթուիլ սկսան՝ այսինքն եւրոպականի նմանող զգեստներ հագան, ան տեսն ալ հրաւիրակի տեղ հրաւիրագրեր սկսան զրկել: Ամուսնութեան մը լուրը աւելի ընդարձակ շրջանակի մը մէջ սկսաւ տարածուիլ: Ետքէն ալ յառաջդիմութիւնը օգնելով, Պոլսոյ նոր «Ազնուաշուքները» — նախկին «Մեծապատիւները» — իրենց կեանքին այդ միջադէպը, ամուսնութիւննին, ամբողջ հայութեան հոչակելու պարտականութիւն մը զգացին: Նոր «Մեծապատիւներն» ալ — նախկին «արգոյ աղաները» — իրենց մեծերուն օրինա-

կին հետեւելու բարի նախանձը ունեցան: Տանձը տանձին նայելով կը հասնի: Բայց կոտորածներէն ի վեր լըրագրութիւնը Հայոց մէջ զժրադարար կը բարգաւաճի. հիմակ չորս օրաթերթ կ'ապրին Պոլիս: Որո՞ն զիմէ խեղճ ամուսնացողը: Նախապատիւ համարուածը զոյցէ մինչեւ Պոմպէյ, Խարղում, Գլոնտայը չտանի չհասցնէ իր համբաւը: Ո՞րն է ամէն անկին մտնողը: Հոգետանջ տարակոյս, որմէն ապահովապէս փրկուելու համար պէտք է չորս թերթին ալ դիմել. ինչ որ շատ սուղի կը նստի: Հայը փառասէր է, բայց պայմանաւ մը. զոհողութիւնը չնչին, փոխարինութիւնը բազմաաատ: Եւ ահա Ազնուաշուքներու ու Մեծապատիւներու հոգիին մէջ փառասիրութիւնը եւ կծծիութիւնը իրարու դէմ կ'ելլեն, բայց երկուքն ալ իրենց շահուն ըմբռնումովը շո՛ւտ կը միանան, եւ կը ծնի բարեպործութեան որդը որ իր հայրն ու մայրը կը կերակրէ Հիւանդանոցին վերջովը: Ահա ի՛նչպէս:

Ամուսնացողները ծանօթ մը ունին որ կը ներկայանայ Հիւանդանոցին գրասենեակը, եւ ոսկի մը կուտայ: Միւս օրը չորս թերթերը միահաղոյն իրենց ազգային բաժնին մէջ կը հրատարակեն պաշտօնական ազդարարութիւն մը որով Ազգային Հիւանդանոցին հոգաբարձութիւնը համայն աշխարհի կը հոչակէ թէ «Մեծապատիւ (ոսկիւնոցին պաշտօնական տիտղոսը) . . . ԼՔէնսիին ընդ Համեստափալ (միշտ ոսկիւնոց) օրիւրդ . . . Եանի ամուսնութեանը առթիւ Մեծապատիւ . . . Եան ԼՔէնսիին Ազգային Հիւանդանոցին մէկ ոսկի նուիրեց փոխան ծաղկեփունջի:»

«Փոխան—Մաղկեփունջ»ի մէկ ոսկիւնոց բարեգործութեան առաւելութիւններէն մէկ բանին յիշեցնեմ: Աին, փեսան, հարսը, փոխան—փնջատուն իրենց անունները, մականունները տպագրուած տեսնելու անճառելի հրճուանքը կ'ունենան: Չորդ, Աշխարհիս ո՛ր անկինը որ պստական լրագիր կարդացող Հայ մը կայ կ'իմանայ ամուսնութեան լուրը: Յորդ, Փոխան—փնջատուն որ մէկ ոսկի ծաղիկներու հաւաքածոյովը շատ անճաշակ և խեղճուկ մարդ մը պիտի ներկայանար, ա՛լ ճաշակի տէր առատաձեռն մէկը կը ճանչցուի: Կորդ, Փեսայ, հարս և փոխան—փնջատու «նսվին գործով իսկ» կը հոչակուին բարեսէր, ողորմած, զըթառատ սրտեր, աշխարհային ունայնութիւններէ խորշող անփառատենչիկ հոգիներ, որոնց գերազոյն հրճուանքն է թշուառի մը աչքին կաթիլ մը արցունքը շորցնել:

Ահա բաղադրեալ տոկոսով բարեգործութիւնը: Եւ կ'ըսեն թէ Պոլսոյ օրագրապետները իրենց գործը աղէկ պիտեն: Բայց այդ խեղճերը իրենք ալ գեռ բարեգործութեան որդին դէմ հականեխական մը չեն գտած: Ո՞վ պիտի համարձակի կեղծաւորութեան դէմ մարտնչել: Յիսուսի ալ սուղի նստաւ «վա՛յ ձեզ»ները, զոր անշուշտ Գողգոթայի վրայ միտքը բերաւ:

Բարեգործական հոգեբանութիւնը բազմաթիւ սիւնակներ կրնայ գրաւել. երբեմն երբեմն այդ նիւթին վերադառնալու առիթը պիտի չպակսի մեզի: Ան այժմ բաւական

կը համարիմ ուշադրութեան յանձնարարել հատոր մը, 366 երեսէ բաղկացած, զոր Հիւանդանոցին հոգաբարձութիւնը այս տարի ազգին նուիրեց: Այդ տարեցոյցը Պոլսոյ Հայոց, զոնէ ստուար մեծամասնութեան մը, զգացումները և ըմբռնումները կը պարզէ: Հոն շատ ակներև կը տեսնենք թէ Հայը ընկերական պարտականութեան գաղափարը չունի: Ենորհ եւ ողորմութիւն կը ճանչնայ միայն, շնորհ եւ ողորմութիւն կը խնդրէ միայն, շնորհ եւ ողորմութիւն կը ստանայ: Պոլիս մեծանձն հայ ժողովուրդ մը չի կայ:

Այս ԼՂերուն մէջ Զարթումեան կը խարանէր «Ազգին Տոբ» յորջրջումը Հիւանդանոցին համար: Երբոքա ու Լ. Կրիկ, «Ազգին Տունը» կամ «Ժողովրդին Տունը» հասարակական յատկացուած յարկ մըն է՝ ուր իմացական ու յարոյական գերագոյն վայելքներու հասնելու միջոցներ առատաձեռնուած են իրեն: Բայց ամէն ժողովուրդ արժանի է այն Ազգին Տան զոր ունի—ինչպէս ըսուած է թէ ամէն ժողովուրդ արժանի է այն կառավարութեան զոր ունի: Հիւանդանոցը իր անցեալովն ու ներկայովը ճշմարիտ Ազգին Տունն է Պոլսոյ Հայոց: Յակոբ Ոսկան չէր սխալած երբ առաջին անգամ այդ անունը դրուածց Ս. Փրկչի ճակատը:

Զանանք որ ապագային ալ մեր Ազգին Տունը հիւանդանոց մը չըլլայ: Սպաննեք հիւանդոտ զգացումները, մահահոտ գաղափարները, և ան ատեն կ'ունենանք մտքով ու մարմնով քաջատոյժ ժողովրդի մը արժանաւոր Ազգին Տուն մը — կամ Ազգին Տուներ:

ՀՐԱԶԴԱՆ

ՅԵՂՈՒՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՌՈՅՄԵՆԵՐԸ

ԱՆՎԱԻԵՐ ՇԵՐՈՍՆԵՐ

—Միքօն է... հեղը տեսնուեցայ՝ նէ... զարմանայի բան:

—Եղբայր, մի՛ բռնկիր. խնդիրը քսան զրուշին վրայ չէ, նա՛, կ'ուզես նէ հանեմ տամ, միայն թէ հասկնանք, նորէն խաբբայ մը չըլլայ: Ո՞վ է ատ Միքօ ըսածդ:

—Հերոս, հերոս... մարդուն վրայէն կը վազէ կոր հերոսութիւնը: Տասը տարի կուտեր է, խմբապետ է եղբր: Պատմեց, տեղն ի տեղօք պատմեց ամէն բան, թուականներով, անուններով: Ծօ՛ ատանկ մարդու մը քսան զրուշ պիտի տաս, ու զժուարութիւն կ'ընես... ծօ՛ պատիւ է քեզի համար:

—Անշուշտ, եղբայր, քառսուն տամ, բայց...:

—Բայց մայց չի կայ. ես ապուշ չեմ, ատ մարդը հե-

րոս է կ'ըսեմ կոր, ըմնցաւ:

—Է՛յ ինչ ըրած է նայինք ատ հերոսդ:

—Ինձի՛ նայէ, չեմ ուզեր որ ատանկ ծագրական խօսիս իրեն նկատմամբ. վազ անցանք քսան զրուշէդ: Մընաս բարով:

—Տղայութիւն մի՛ ըներ, նսաէ՛: Գիտես որ ես ալ քիչ շատ հայրենասէր եմ ու ձեռքէս եկածը չեմ խնայիր: Երիտար կ'ըսեմ, հրացանը չեմ կրնար առնել ու կուռլը, բայց կողոզներն ալ կը յարգեմ, և երբ պէտք ըլլայ, կըրցած օգնութիւնս կ'ընեմ:

—Ես ալ անոր համար քեզի դիմեցի:

—Պատմէ՛ նայինք ուրեմն, ինտօր այդ մարդը Ալեքսանդրիա ինկեր է:

—Զարմանալի է ասոր պատմութիւնը: Վանի կողմերը երեք հոգիով անցած տարի կուտեր է, չորս օր, երկու հարիւր զինուորի գէմ, յետոյ ութ հարիւր ֆիւրա եկեր պաշարեր են զիրենք, տեսեր է որ ճար չի կայ, անցեր է Պարսկաստան: Հո՛ն ութ հոգիէ նոր խումբ մը կազմեր ու նորէն յարձակեր է Մուշի կողմերը: Նորէն օրերով պատերազմ: Այս անգամ Էրզնկեանէն բանակ մը զրկեր են իրեն դէմ. զիշեր մը բանակին մէջէն անցնելով յաջողեր է փախչիլ ու Ռուսաստան անցնիլ: Հոնկէ նորէն 12 հոգինոց խումբով մը եկեր է Ալաշկերտի վրայ յարձակելու: Ռուս կառավարութիւնը իմացեր ու անմիջապէս բանակ մը զրկեր է զանոնք արդիւելու համար. միւս կողմէն Թիւրքերը, երկու հազարի չափ, եկեր են արշաւանքը արդիւելու: Այսպէս խեղճը երկու սուրի մէջ մնացեր է ու ամիս մը անընդհատ կուտելէ ետքը յաջողեր է ծպտեալ ինքզինքը նետել Տրապիզոն ու հոնկէ ֆրանսական շուքնաւով մը փախչիլ:

—Ընկերները ո՞վ են եղեր:

—Անունները տուաւ ամենուն ալ, զխաւարները Վազէն ու Արշակ կը կոչուին:

—Վազէն ու Արշակ, ինքն ալ Միքօ... ես ատ անունները տեղ մը կարգացի. կարծեմ Դրօշակի վերջին թիւին մէջ: Կեցի՛ր նայիմ:

Ու ոտք ելաւ, գնաց սրճարանին անկիւնը դրուած սեղանին վրայ փնտոնեց ու գտաւ Դրօշակի 31 մարտ 1899ի թիւը և յաղթական վերադարձաւ:

—Նա՛ քու հերոսդ Գուրուպաշի նահատակներէն է, տարի մը առաջ մեռեր է:

Միւսը առաւ թերթը, երեք հերոսներուն պատկերը դիտեց, յետոյ կարդաց անոնց յիշատակին նուիրուած յօդուածը:

—Ծօ՛, վա՛յ անօրէն, գոչեց, ըսել է ատ մարդը իսխաբեր է Միքօն եմ ըսելով, վա՛յ խաբբայ, վա՛յ անեղբս...:

* * *

Այո՛, խաբուած էր, խեղճ Սիսակ Անկախեանը, յեղափոխականներու այդ բոցեռանց, անձուէր, միամիտ

հիացողը: Եւ առաջին անգամը չէր, ո՛չ ալ վերջինը պիտի ըլլար, աւա՛ղ:

Ալեքսանդրիա, Աթթարիի մէջ ունեցած իր ծխախոտի պղտիկ խանութին անցած էին ամբողջ անվաւեր Արխանեանները, Աշոտ Թաթուրները, Սուրէնները, Արտաշէանները, Չաւենները, Կարօները: Իր գլխուն թափած էին բոլոր կեղծ Շանթերը, Կայծակները, Փայլակները ու ամենուն ալ հասած ու ամենուն ալ օգնած էր: Իր տան մէջ երեք ամիս պահած ու կերակրած էր հերոս մը որ պարզապէս զրամանենդութեան համար ութ տարի Աքեայի բանաւ մնալը ետքը յաջողած էր փախչել Եգիպտոս: Խելքը միտքը տուած հերոսներուն, երեսի վրայ թողած էր գործը, որ գրեթէ ա՛լ չէր քայլեր: Սիկառէթները անպարզարբ կը սպառէին կրակի ու մուխի սիրահար հերոսներու շրթունքին վրայ, որոնք կատաղօրէն կը քաշէին անոնց ծուխը, զանոնք մէկ անգամէն բնաջինջ, բնաբարձ ընելու թափով մը, կ'երեսնք քիթէն բերնէն մուխը կը ժայթքեցնէին անլուր հայհոյանքի, կատաղի սպառնալիքի տարափով մը, թուրքերու խառնուած, անոնց սուլթանին, անոնց Մուհամմէտին, անոնց կրօնքին դէմ:

— Ձեռքս անցնէին, հրացանս դնէի կործաններուն, քաշէի, գետին փռէի այդ շան գաւակները... անպիտաններ:

Ու հերոսը գետին կը նետուր սիկառէթին ծայրը ու ոտքովը կը տրորեր, կը ճգմէր, կը տափակցնէր զայն:

— Աղբա՛ր, բան մը չէ, հազար հոգի ըլլանք, թո՛ղ հազար հոգի տան ինձի, նայէ՛ ինչքեր կ'ընեն: Մէկ հատ մը ձեռքէս չ'ազատիր...

Ու կ'երկննար, անողօք, անդիմադրելի, աննահանջ ընդհանրապէս զէպի սիկառէթին տուփը:

— Մարդ, զէնք և դրամ, ահա՛ մեզի պէտք եղածը, ուրիշ բանի պէտք չունինք... սա՛ լուցկին հոս կ'անցընեն:

— Ծօ՛, աղբա՛ր, չես դիտեր ինչքեր պիտի ընէինք, ինչպէս կարգադրեր կ'ինք ամէն բան... բայց ինչ ըսեմ, Աստուծոյ կրակին գան արգելք եղողները: Նորէն ըրինք, չըրինք չէ, այդ շուններուն մարը լացուցինք, միայն թէ պէտք եղածին պէս չեղաւ... օ՛ֆ, օ՛ֆ:

Սիկառէթը արդէն լմնցած է եւ ուրիշ մը կը յաջորդէ անոր: Սիկառէթ կը դիմանայ ասանկ խօսակցութեան, ասանկ հերոսին:

Բերանը բաց, ականջը տնկած, հիացիկ, Սիսակ Անկախեան երկու երեք տարիէ ի վեր մտիկ կ'ընէր բոլոր այդ խօսքերը որոնք իրարու կը նմանէին՝ այ՛եամի մը երկուտեակ ուլերուն պէս:



Հիմա դառնանք մեր պատմութեան: Սիսակ երբ համոզուեցաւ, Դրօշակի ընթերցումէն ետքը, որ դարձեալ անվաւեր հերոսի մը զոհ գացած է, բարկութեամբ դարձաւ իր խանութը ուր ժամադիր եղած էր Միքայիլին, անոր յանձնելու համար բարեկամէն աննելիք ստակը:

— Ասանկ խարբեայութիւն չըլլար, պէտք է որ բացատրութիւն մը ուզեմ իրմէ. հերիք քթիս խնդաց երկու

շաբաթէ ի վեր...

Միքօն երեցաւ խանութին առջեւ, որոշեալ ժամէն քառորդ մը առաջ:

— Ի՞նչ լուր, սիկարա մը տուր նայինք, սա լուցկին ալ անցո՛ւր. խահուէ մը չե՞ս ապսպրեր: Օ՛ֆ, յոգնե՛ր եմ պէ. ի՞նչ տաք կ'ընէ կոր այստեղ: Դուն ալ խանութիդ մէջը կը փակուիս կը մնաս, աղբար. ո՛ւր է ըսիր որ ծովին եզերքը տեղ մը կայ եղեր հոն պիտի երթայինք... պաքո՞ս է, մաքո՞ս է, ի՞նչ խառնախախ է...: Ես աս տաքերուն չեմ դիմանար կոր... չեմ վարժուած: Սա արժող տու՛ր:

Միքօն նստաւ և շարունակեց խօսքը.

— Ի՞նչ ըրիր, գացիր տեսա՛ր մարդդ, ստակը տուա՛ւ, չէ նէ մի գայլու աւետարան կարդաց: Ի՞նչ այդչափ զրժուարութիւն կ'ընէ կոր երկուրէնէ ի վեր... իբր թէ մեծ բան մը ըլլար տալիքը: Թո՛ղ չի տայ պէ, թո՛ղ չի տայ, վագ անցանք, Աստուած ողորմած է, անօթի չենք մնար... տուա՛ւ:

— Ձէ, չտուաւ, պատասխանեց Սիսակ, չոր, կը տրուի ձայնով մը:

— Չտուա՛ւ...

— Դուն ինձի չըսիր որ Շատախցի Միքօ խմբապետն ես, վանեցի Արշակին ու վագգէնի ընկերը:

— Է՛յ, հա՛, ըսի:

— Աղէ՛կ. բարեկամս Դրօշակին նոր թիւը ցուցուց, որուն մէջ երեք հերոսներուն ալ պատկերակար: Շատախցի Միքօն անցած տարի մեռեր է:

— Վախ գառալը, մեռեր է հէ... բացազանչեց կեղծ Միքօն, նոր սիկառէթ մը առնելով, ... ան ալ գնաց, օ տա կիտտի...:

— Եղբայր, գոչեց վերջապէս Սիսակ իր խօսակցին աներեսութենէն կատղած, ինչո՞ւ ինձի ասանկ խաբեցիր և ըսիր որ դուն ես Միքօն, ես ալ պարսպ տեղը մարդուն քովը խաղք եղայ...:

— Վա՛յ կիտի աչաւն Միքօ, կ'աշխարէր միտք, զըլուխը ճօճելով, մեռեր է հէ... ինտո՞ր մեռեր է ատ ընտան պէս մարդը: Ծօ՛, քեզի բռնէր՝ Նուրգ կը հանէր: Ան իմ ճանչցած Միքօն է նէ՛ անպատճառ տասը հատ թիւրք գետին փռելէն ետքը ինկած է... Դրօշակը ի՞նչ կը զրէ կոր նայինք:

— Ձեմ գիտեր, պատասխանեց Սիսակ որուն սրբութեամբ խօսելու հետզհետէ կ'աւելնար. խնդիրը անոր ի՞նչպէս մեռնելուն վրայ չէ... սա դուն ինչո՞ւ իս խաբեցիր:

— Խաբելու ի՞նչ կայ... ատ Միքօ ըսածդ իմ քեռիս կը սեպուի... մեր գեղը Շատախէն օրուան մը ճամբայ է. քանի՛ անգամ սուրբ կարապետին վանքը ձերիտ խաղացիր ենք մէկտեղ: Դեռ երկու տարի առաջ անոր հարը պապուս արտը ծախու պիտի առնէր. նա՛, կ'ուզես նէ՛ հարցուր վանեցի կիրակոս աղբօր որ հոս ժամէն է և մեզի աղէկ կը ճանչնայ...: Խաբել, ատ ի՞նչ խօսք է, զարմանալի բան, քեզի ինչո՞ւ պիտի խաբեմ, ես ալ հայ չե՛մ, ես ալ քրիստոնեայ չե՛մ: Խորիմեան Հայրիկը վարսագայ վանք

քը եղած ատեն իմ պապս վանքին խորունկն էր ... մենք ալ հերոս կը սեպուինք:

— Ինչ որ է, մարդը դրամ չտուաւ: Բարեկամս, գըլ-խուզ ճարը նայէ՛. ես ա՛լ աւելի բան մը չեմ կրնար ընել. այսչափ օր է ձեռքէս եկածը ըրի: Իմ ալ կարողութիւնս յայտնի է, կը տեսնաս կոր, կ'աղաչեմ ինչ բան մը մի՛ սպասեր:

— Չես կրնար նէ աղէկ, գոչեց անվաւեր հերոսը՝ բարկութեամբ ոտք ելլելով, ... բայց ատանկ խօսելու իրաւունք չունիս. քենէ բռնութեամբ բան չուզեցինք, կոկորդ չսիմեցինք, փորդ վանակ չխօթեցինք... չես կըրնար, լմնցա՛ւ: Պարզապէս կ'ըսես որ չեմ կրնար... բայց երկար չեն ընեք: Տէ՛ր Աստուած, ի՛նչ մարդերու մնացինք: Բարով խերով չիյնայինք աս անիծած քաղաքը: Մնաս բարով:

— Ազատեցանք ձեռքէն, մտածեց Սիսակ ցնծագին: Չէ՛, դեռ չէր ազատած...:

Միքօն բանի մը քայլ աննելէն ետքը յանկարծ դարձաւ զէպի խանութ:

— Սըկէ՛ քանի մը սիկարա տո՛ւր, ըսաւ անպատկառ արհամարհանքի շեշտով մը:

— Ա՛ն:

Այս անգամ «հերոս»ը աներևոյթ եղաւ վերջնակա-նապէս:



Հազիւ ամիս մը անցեր էր:

Սիսակ Անկախեան ատուս մը խանութին առջեւ, աթոռի մը վրայ նստած, թերթ կը կարդար երբ քառասուն տարեկանի մօտ, չոր ու երկայնահասակ մարդ մը դիմացը կեցաւ եւ հարցուց.

— Պարո՛ն, դուն Հա՛յ ես:

— Այո՛, պատասխանեց ծխալաճառը:

— Ո՞ւր է սա մարդուն տեղը. մամ մըն է կը փնտռեմ կոր, շարունակեց միւսը, պզտիկ թուղթ մը երկնցնելով:

Սիսակ առաւ թուղթը որուն վրայ իր անունն ու հասցէն գրուած էր:

— Ես եմ փնտրած մարդդ: Ո՞վ տուաւ աս թուղթը:

— Աստեղացի Հայերուն տեղերը իմանալ ուզեցի, Մասիսի սրճարանէն տուին:

— Ի՛նչ կայ. ըսելի՞ք մը ունիք:

— Ի՛նչ պիտի ըլլայ, Հայ չե՛նք, օտար երկիր ինկեր ենք, հարկաւ իրար պիտի փնտռենք:

— Անանկ է... նստեցէ՛ք:

Ու Սիսակ աթոռ մը տուաւ իր խօսակցին:

— Նո՞ր եկած էք Ալեքսանդրիա:

— Քանի մը օր կայ:

— Ո՞ր կողմէն:

— Հիմա խնդիրը իմ ո՛ւր տեղէն գալուս վրայ չէ. . .

Հոս ի՛նչ պիտի ընեմ, ասոր վրայ մտածէ՛. Դուն օտարա-կան չես, Հայ ես, քեզի՛ շիտակ շիտակ ամէն բան ըսեմ, ... վրաս՝ երկու դրուշ ունիմ միայն:

— Չեր անունը ի՛նչ է:

— Մարկոս, Կիրակոս, Թորոս, ի՛նչ կ'ուզէ ըլլայ... ինծի սենեակ մը պէտք է:

— Տաճկաստանէ՛ն կուգաք կոր, հարցուց Սիսակ, որ իր խօսակցին խորհրդաւոր ձեռքէն սկսած էր հետաքըր-քրուիլ ու նշանաւոր հերոսի մը հոտը աննել:

— Տաճկաստանէն կուգամ, Ռուսաստանէն կուգամ, Հինսիստանէն կուգամ, տեղէ մը կուգամ կոր հարկաւ: Երկինքէն չիսկայ...:

— Այո՛, բայց գիտէք, պատասխանեց Սիսակ ձեռքերը շփելով, վերջապէս պէտք է որ ձեր անունը գիտնամ գոնէ, որպէս զի ըստ այնմ, եթէ կարելի է, աշխատիմ օգտակար ըլլալու: Չեր խօսքերէն գատելով ինծի այնպէս կը թուի թէ փախստական յեղափոխական մըն էք... չեմ գիտեր, բայց իմ վրաս այդ տպաւորութիւնը ըրիք:

— Յեղափոխական, ըսաւ մարդը գլուխը որորելով ու ձեռքը շարժելով, է՛հ, եղանք, ըրինք, զարկինք, զարնուեցանք... բայց, ի՛նչ օգուտ, դրամ չի կայ, մարդ չի կայ, զէնք չի կայ:

Սիսակ անծանօթին կը նայէր անցնուն հետաքըրքու-թեամբ որուն կը սկսէր տեսակ մը հիացում խանուիլ.

— «Թերեւս Սամսոնի Մինաս Օղլուն է», կը մտածէր, որս մասին լսուած էր թէ նոյն օրերը Ալեքսանդրիա պիտի գար: Ապահով ըլլալու համար հարցուց յանկարծ.

— Սամսոնի կողմէ՛րն էիք:

— Աղբար, քենէ բան մը պիտի չկրնամ ծածկել, հասկցայ, գոչեց միւսը ... ես Մինաս Օղլուն եմ:

— Չընե՛ս, եղբայր, գոչեց Սիսակ տեղէն ցատքելով ու մարդուն վիզը պլուելով:

Երբոր յուզումը քիչ մը հանգարտեցաւ, տակաւին դողահար ձեռքերով՝ Սիսակ սիկառէթին տուփը առաւ եւ հրամցուց «Մինաս Օղլուն»ին: Բայց յանկարծ ետ քաշեց տուփը.

— Չէ՛, կեցէ՛ք ձեզի ձեր երկրին՝ Սամսոնի՝ ծխախոտէն տամ. հաստեղ էմբէրիալ կ'ըսեն ասոր. ամէնէն բարձր տեսակն է, Խըտիլին ու Լորտ Գրոմբրին խմած տեսակէն է:

Ու նոր տուփ մը ներկայացուց:

Մարդը առաւ սիկառէթը, վառեց և քաշել սկսաւ:

— Է՛, ինտո՞ր է... ասոր հազարը երկուհարիւր յիսուն դրուշի կը ծախենք:

Միւսը երեսը ծամածոց եւ քմծիծաղով մը պատասխանեց.

— Ասիկա քիչքիչն է, սաւան է:

Ու շարունակեց ծխել:

Սիսակ թէև բաւական նեղացաւ իր ապրանքին դեմ ցոյց տրուած արհամարհանքէն, բայց ձայն չհանեց: Մի-նաս օղլուի պէս հերոսի մը ներելի էր քիչ մը դժուարա-հաճութիւն:

Նոյն իրիկունը նորեկը տեղաւորուեցաւ Սիսակի տան մէջ:

— Ամա՛ն, ըսած էր Սիսակին, չըլլայ որ անունս մէջ-

տեղ հանես... թերևս նորէն Տաճկաստան դառնամ:

Բայց Սիսակի սնափառութիւնը կարող չէր այդչափ խոշոր գաղանթը մը երկար ատեն ծածուկ պահել, եւ եւրեք օր չանցած ամէն մարդ իմացաւ որ հոչակատը Մինաս Օղլուն Անկախեանին տունը հիւր է:

* * *

Քանի մը օր ետքը, Սիսակի բարեկամներէն մին հեի հե սանութը եկաւ:

—Շօ՛, ատ քու մարդը Մինաս Օղլուն չէ եղեր:

—Ի՞նչ կ'ըսես:

—Բուն Մինաս Օղլուն առջի օրը եկեր է. հիմա հոս եկած ատենս ալ Մէնշէի հրապարակը նստած էր:

Սիսակ ֆէտը դրաւ ու զուրս նետուեցաւ, — «Երթանք սա մարդը տեսնանք» գոչելով:

Փողոցին ծայրը հանդիպեցաւ կեղծ Մինաս Օղլունի որ խանութ կուգար:

—Աղէկ զէմս ելար, եկո՛ւր միասին, ըսաւ անոր:

Երեքը մէկ, քսան վայրկեան ետքը, հառան Մէնշէի հրապարակը ուր խուժը մը Հայեր նստած էին:

Մօտեցան խմբին:

—Վայ, պարոն Սիսակ, եկուր նայինք, գոչեց նրստողներէն մին, եկուր նայէ՛ք եզրի ո՛վ պիտի ներկայացնենք:

Ու իրենցմէ մէկը ցոյց տալով ըսաւ.

—Մինաս Օղլուն է, Սամսոնցի Մինաս Օղլուն:

—Կը սխալիս, բարեկամս, գոչեց Սիսակ, Մինաս Օղլուն՝ ահաւասի՛կ:

Ու իր մարդը ներկայացուց:

Երկու Մինաս Օղլունները ապուշ ապուշ իրար նայեցան:

—Աս ի՞նչ բան է, հարցուց խմբէն մէկը զէպի իրենց Մինաս Օղլունին դառնալով:

—Ան ո՛ր տեղէն Մինաս Օղլուն կ'ըլլայ կ'որ. Աթիւնա, հայկական ճաշարանը աշէիէր, պատասխանեց մարդը:

—Էյ զո՞ւն երբէն ի վեր Մինաս Օղլուն եղար, գոչեց միւսը իր հակառակօրդին. ծօ՛ դուն Ազորան խորու խահուէճիութիւն ընող ֆէմախցի Մովսէսը չե՞ս:

—Է՛հ, ասիկա շատ քօնաֆ բան է, գոչեցին նստողները կօկորդալիբ բահեցա՛ծ մը ձգելով:

* * *

—Ի՞նչ ընեմ, եղբայր, ի՞նչ ընեմ, կը գոչէր քանի մը օր ետքը, Սիսակ Անկախեան, երբ բարեկամներէն մէկը անվաւեր հերոսներուն մասին իր շափազանց դիւրահաւանութիւնը կը ծաղրէր: Ի՞նչպէս զանազանեմ ճշմարիտը կեղծէն, ի՞նչ միջոց կայ ասոր, չեմ գիտեր: Նայէ ծխախոտին համար, փորձադէտներ կան. մարդիկը տերեւ տեսնելուն պէս՝ պաֆրա, սամսոն կամ պոլսճա ըլլալը կ'ըսեն: Քարերու համար անանկ. մարդը խոշորացոյցը կը հանէ կը նայի ու բեզի կ'ըսէ կե՛ղծ թէ ճշմարիտ ազամանդ ըլլալը: Գիտին, նոյնպէս, պուտ մը կ'առ-

նէ, քիմքին կը քսէ, լեզուն կը դարձնէ բերնին մէջ ու կ'ըսէ, «Ասիկա խաղողի գինի չէ». իսկ հարազատ հերոսը անվաւերէն որոշելու համար ի՞նչ փորձի դիմելու է...:

—Տե՛ս ի՞նչ կ'ընես, պատասխանեց բարեկամը. երբոր չորս, վեց, տասը տարի լեռները կոխ ըրած հերոս մը ներկայանայ բեզի, ձեռքը հրացան մը կուտաս եւ կ'առաջարկես որ զայն լեցնէ ու պարպէ: Եթէ կրցաւ ընել, ըսել է հարազատ է, եթէ ո՛չ, անվաւեր... Թէև, աւաղ, հերոսներ կը ճանչնամ, երեցս հարազատ հերոսներ, որոնք այդ գործողութիւնը պիտի չկրնային ընել: Գալով նշան առնելու ու նշանին զարնելու, անշուշտ այդչափ պահանջկոտ պէտք չէ ըլլալ... արդէն ատիկա մեր խնդրէն բոլորովին զուրս է:

ԵՐՕՏ

ԹԻԻՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹԻԻՐՔԻԱ

Հեռագիրը տակաւին չժանուց թէ սուլթանը վերջնապէս հաւանած ըլլայ Ռուսիոյ պահանջումներուն՝ հիւսիսային Փոքր-Ասիոյ մէջ ապագային շինուելիք ուսական երկաթուղիներուն մասին. սակայն եւրոպական բոլոր թերթերուն թղթակիցներն ալ համաձայն են թէ սուլթանին համար վերջ ի վերջոյ ուրիշ բան մը պիտի չմնայ ընելիք բայց եթէ տեղի տալ:

Որովհետեւ Ռուսիա անդրդուելի կը մնայ իր պահանջումներուն մէջ, ու քաղաքական ընդհանուր կացութիւնը այնքան նպաստատուր է իրեն որ ամէն միջոց ի գործ պիտի գնէ թիրքիոյ վրայ ճնշում բանեցնելու համար: Միայն, զիջումը որ Բեդրպուրիի կառավարութիւնը պիտի ընէ, կ'ըսէ Թայնզ, կովկասի հայ գաղթականներուն զարձին մասին չպնդելը պիտի ըլլայ, — խնդիր մը որ, ինչպէս Գրեոյց Չայրուզի ու Վուսիշի Չայրուզի շրջան կուտան, Ռուսիոյ ձեռքը պարզապէս դիւանագիտական հնարք մըն է, ուզած ատենը առաջ քշելու կամ ետ առնելու համար: Բայց անշուշտ ասիկա լոկ պիտի չբոււէր այսքան ծանրակշիռ գործ մը ի գլուխ հանելու, ուստի Ռուսիա աւելի ազդեցիկ ու սպանալի միջոցներու կը դիմէ:

ՌՈՒՍՍԻԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Չարին մէկ ուրազը կը հրամայէ ցամաքային ու ծովային բոլոր զօրքը շարժման մէջ դնել: Սե ծովու նաւահանդիսներուն առևտրական շատ մը նաւերը զրկուել են իրենց նաւաստիներէն որոնք հարաւային Ռուսիոյ նաւային զօրքին կը վերաբերին, Սև վաստաբուլի մէջ պաշար կը մթերեն, եւ կ'Պոլսոյ ուսական պահականաւր, Չերքեսսոնք, հրաման ստացել է ամէն պատահականութեան պատրաստ գտնուելու: Կ'ըսուի նաեւ թէ ուսական զբաժանոր մը հրա-

ման ստացեր է Տրապիզոնի առջև երթալու, և թէ թիւրքիա չորս խոշոր թնդանօթ ու մեծ թուով զօրք զրկեր է Տրապիզոնի շրջակայքը:

Օտևայէն կը գրեն թէ ուսական ելմտական նախարարութիւնը պակսեցուցեր է Սև ծովու ուսական առևտրական նաւերուն հանքածուխի տուրքը, որ այդպէս կը հաւասարի այժմ պալթիկեան նաւահանգիստներուն մէջ առնուած թեթև տուրքին: Դիտելի է որ այս զիջողութիւնը եղած է լոկ այն ընկերութիւններուն որոնք զօրքերու փոխադրութեան յարմար մեծ նաւեր ունին:

Ռուսիա, այս ազդարարութիւններով չշատանալով, կ'երևայ թէ Պուլկարիոյ կողմէն ալ ձայն մը հանել տալու կ'աշխատի՝ բոլորովին տէրը ըլլալու համար կացութեան: Կ. Պուլէն մարտ 12 թուականով կը հեռագրեն Բեռլինէ Չայրոնէկի թէ թիւրքիոյ պաշտօնական շրջանակներուն մէջ մեծ մտատանջութիւն յառաջ բերած է այն զրոյցը թէ Ռուսիա Պուլկարիան կը զրդուէ կոր ընդգէմ թիւրքիոյ: «Բարձրաստիճան թիւրք պաշտօնատարներ լիովին կը հաւատան այդ զրոյցին, ու կը յայտնեն թէ համոզուած են որ Պուլկարի նաւահանգիստը քիչ առնելն Ռուսիոյ պիտի յանձնուի: Այդ նաւահանգստին յանձնումը՝ Կ. Պուլսոյ ճամբան բաց պիտի պահէ, ու թիւրքիոյ մտերաքաղաքը յանկարծակի ո եւ է յարձակման առջեւ անպաշտպան պիտի ըլլայ:— Ընդհանուր կացութեան իրազեկ պոլսեբնակ Եւրոպացիները կը յայտարարեն թէ ուս պաշտօնատարներուն ամբողջ վարմունքը իրենց ենթակարգել կուտայ թէ սովորականէն շատ աւելի կարևոր բան մը կ'անցնի կը դառնայ կոր:»

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ ՓՈՒՔՐ-ԱՍԻԱ

Բեզրպուրկէն մասնաւոր հեռագիր մը կ'ըսէ թէ կառավարութիւնը այժմ պատրաստած ու ամբողջացուցած է Հայաստան ու Անատոլու շինուելիք ուսական երկաթուղիներուն ամբողջ ծրագիրը: Կարս-Էրզրում երկաթուղին մինչև Տրապիզոն պիտի երկարաձգուի, և ծովագերբէն ուրիշ գիծ մըն ալ Պաթումէն մինչև Տրապիզոն:

Այնուհետև, ուս կառավարութիւնը թիւրքիայէն պիտի ինդրէ Տրապիզոնի գիծը երկարել մինչև Սինոպ: Ո եւ է պարագայի մէջ, Ռուսիա թող պիտի չտայ որ իրմէ զատ մէկը շինէ ու վարէ Պաթում-Սինոպ երկաթուղին, և կը յայտարարէ թէ Պրանսա իրեն հետ է այս մասին, ու Գերմանիա ալ չի հակառակիր:

Այս հայկական-անատոլուական երկաթուղիի ծրագրին գործադրութեամբը, Ռուսիա ա'լ աւելի ուժով և ապահով զիրքի մը մէջ պիտի գտնուի՝ պահանջելու համար որ Սև ծովը փակ պահուի ամէն մարտանաւերու առջեւ բացի թիւրքիոյ մարտանաւերէն:

Կարս-Էրզրում երկաթուղիին մէկ ուրիշ ճիւղը Սրվագի ճամբով պիտի երկարաձգուի մինչև Էնկիւրի, որ պիտի միանայ արդի օսմանեան գծին, որով երկաթուղիի ուղղակի հաղորդակցութիւն մը պիտի բացուի կովկասի եւ Վոսփօրի միջև:

ԹԻՒՐԿԻՈՅ ԱՊԱԳԱՆ

Սրահնաքառի Կ. Պուլսոյ թղթակիցը կացութեան վրայ իր տեսութիւնները կը պարզէ կարևոր հեռագրի մը մէջ. «Փոքր-Ասիոյ մէջ երկաթուղիի մենաշնորհը վայելելու համար Ռուսիոյ ըրած պահանջումներուն ո'րքան կարևորութիւն ընծայենք, շատ չէ: Ռուսական ծրագիրը՝ կատարեալ թեւարկութիւն մըն է երկրին ամբողջ հիւսիսային կէտին վրայ, թիւրքիոյ ուրիշ բան չթողլով բայց եթէ անշան պատառ մը Էրէլլիէն Ատաբազար, և Գերմանիոյ՝ Վանէն Տիարպէքի: Առ այժմ կարելի չէ ըսել թէ առաջուց համաձայնութիւն մը կ'ընդունի Գերմանիոյ հետ. բայց եթէ կ'ընդունի, Գերմանիոյ եւ Ռուսիոյ համար լոկ մամանակի ինդիր մըն է ամբողջ Փոքր-Ասիոյ նահանգները ծածկել երկաթուղիներով, և այդ նահանգները իրենց զատ զատ կամ հաւաքական ազդեցութեան շրջանակին մէջ առնել:

«Ռուսիոյ նպատակն է հիմակ իր ազդեցութիւնը գերակշիռ ընել հիւսիսային Փոքր-Ասիոյ մէջ: Ամենաչնչին խոսովութեան մը վրայ, զոր շատ զիւրիւն է յառաջ բերել, այդ քաղաքական ազդեցութեան պիտի յաջորդէ իրական գրաւում: Սուլթանը այնպէս բռնուած է Գերմանիոյ եւ Ռուսիոյ ցանցին մէջ, որ անկարող է ճողոպրելու, եւ թիւրք նախարարները ահուղողով կը նային արդի կացութեան որ կրնայ վախճանին սկիզբը ըլլալ:»

ԱՆՂՂԻՈՅ ԴԻՐՔԸ

Անղլիական դիւանագիտութիւնը լուռ կը մնայ այս ամէնուն հանդէպ, ինչպէս անղլիական մամուլն ալ. բայց այս վերջնային թղթակիցները ձեռնընուն եկածը կ'ընեն կոր՝ սուլթանին հասկցնելու համար թէ ի'նչ ողբալի սխալ մը գործեց Անղլիայէն անջատուելով: Տեյլի թեկէկրաֆի Կ. Պուլսոյ թղթակիցը սա նպատակաւոր տողերը կը զրկէ իր թերթին. «Թիւրքերը, շատ քիչ բացառութեամբ, լայն շունչ մը առնելու վրայ են՝ Հարաւային Ափրիկէի մէջ Անղլիոյ յաջողութեանց հանդէպ: Իսկ օտարազգիներուն երեսը կախ է, մասնաւորապէս Գերմանացիներուն և Յըրանսացիներուն: Գերմանացիները մասնաւոր շատ անհանգիստ են, որովհետև թիւրքերուն մէջ արտունջը օր օրի կը շատնայ Փոքր-Ասիոյ տնտեսապէս Գերմանիոյ ձեռքը անցնելուն դէմ, որովհետև Պաղատատի երկաթուղիին արտօնութիւնը իրօք տարբեր բան մը չի նշանակիր: Թիւրքերը օր օրի ըմբռնելու վրայ են թէ բնաւ բան մը չչահեցան սուլթանին սիլիկ-փիլիկէն Գերմանիոյ կայսեր հետ:

«Որչափ ատեն որ Անղլիոյ ոտքը ձեռքը Ափրիկէի մէջ կապուած կ'երևնար, այս զգացումները լուռ կը մնային: Հիմակ որ անղլիական շուքը վերակենդանանալու վրայ է, այն անհանգստութիւնը սր կը զգացուէր ուսածկան գործունէութեան Անղլիայէն արգելք չգտնելն, անհետանալու վրայ է: Գերմանիոյ բռնած զիրքը ակնբերելի կ'ընդունուի ցոյց կուտայ թէ թիւրքեան քսովուած լիմոնի մը պէս է իրեն համար: Միւս կողմէ, Ռուսերը մինչև Էր-

զրոււմ երկաթուղի մը շինել կը խնդրեն, իբր ուղղակի հե-
տեանք Պաղտատի արտօնութեան: Գերմանիա բոլոր-
վին անտարբեր է այդ մասին. բայց եթէ Ռուսիա իր
խնդրածը ձեռք բերէ, ասիկա սկզբնաւորութիւնը պիտի
ըլլայ ուսական թեւաբարեանը հիւսիսային-արեւելեան
Փոքր-Ասիոյ վրայ և առաջին գործնական քայլ մը զէպի
թիւրք կայսրութեան անդամատութիւնը: Ուստի թիւր-
քերը կը զգան թէ սուլթանը սխալ ճամբէ գնաց, և թէ
Անգլիոյ դէմ արհամարհանքը, որ վերջին ատեններս իր
բազաբազանութիւնը եղած էր, պիտի փութացնէ անխու-
սափելի քայքայումը:»

Կ. Պոլսէն ուրիշ հեռագիր մը կ'ըսէ թէ Անգլիոյ վեր-
ջին յաջողութեանց վրայ՝ Երբուրդի մէջ սկսեց են ազատ
շունչ առնել, և սրանց կը բաղձան որ Անգլիա շուտով
յաղթական ելլէ Ափրիկէն:—Բայց, որչափ կարելի է
զրուի գատել, Անգլիա այս պահուս կը շատոնայ այն վըս-
տահութեամբ թէ Ռուսիա բան մը պիտի չընէ Աֆրի-
նիստանի ու Հնդկաստանի դէմ, ու Ռուսիա առ այժմ
« եւ է մտահոգութիւն չունի այդ կողմէն: Թայմը կ'իմա-
ցընէ թէ Կ. Պոլսոյ ուսական զեսպանը վատահ է որ ու-
սական պահանջումներուն գոհացում պիտի արուի: Թիւր-
քիոյ արտաքին գործերու նախարար Թիւֆիզ փաշա զի-
շեր ցորեկ Երբուրդի պալատն է եղեր. բայց Երբուրդէն
ուրս չելլելով չէ որ պիտի կրնայ այս պիտարութեան
մէջէն ելլել: Պ: Չինովիէլի հետ ունեցած վերջին տե-
սակցութեանը միջոցին, սուլթանը ըսեր է թէ որոշած է
ա՛լ երկաթուղիի արտօնութիւն չի ալ օտար ընկերու-
թիւններու: Դեսպանը, անդրդուելի, պատասխաններ է որ
թիւրքիոյ ուրիշ մասերուն համար՝ ատիկա սուլթանին
զիտանալիք բանն է. բայց հիւսիսային Փոքր-Ասիոյ գալուստ,
Ռուսիա կը պնդէ երկաթուղիի շինութեան իր այլամերձ
իրաւունքին վրայ:»

Սուլթանը, ժամանակ վատկելու համար, գործը
յանձնեց է Բեդրպուրկի զեսպան Հիւսէյին Հիւսնի փա-
շայի, որպէս զի ուղղակի խորհրդակցի կոմս Մուրադիէլի
հետ և պակսեցնել տայ ուսական պահանջները:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Մթանաւարտի Պերլինի թղթակիցը կը հեռագրէ մարտ
9 թուականով. « Հակառակ ուրիշ զրոյցներու, շատ ըս-
տոյգ ազդիւրէ կրնամ հաւատարմ ձեզի թէ գերմանական
եւ ուսական սէնտիքաները, որոնք կը մտադրին Փոքր-
Ասիան ծածկել երկաթուղիներու ցանցով մը, « եւ է կեր-
պով իրարու հետ չեն մըցիր, հապա, հաւանօրէն շատ
չանցած, պիտի ցոյց տան թէ իրարու կը գործակցին
և որոշած են վերջի վերջոյ իրարու միացնել իրենց ուժե-
րը: Կ'իմանամ նաև որ եթէ անգլիացի զրամատէրներ
կը փափաքին զրամ յատկացնել Պաղտատի կամ ուրիշ
երկաթուղիներու, այնչափ սիրով պիտի ընդունուին որ
չափ ֆրանսացի զրամատէրները:»

Տե՛օյ՜ պանքի տնօրէնը ամսուս վերջը Կ. Պոլսի
պիտի երթայ՝ Պաղտատի երկաթուղիին արտօնութեան

վերջնական պայմանագրութիւնը կնքելու թիւրք կառա-
ւարութեան հետ:—Գերմանացիները ուրիշ բանի նայած
չունին բայց եթէ իրենց շահերը առաջ տանիլ թիւրքիոյ
մէջ: Հիմակ աշուրնին պարձուցած են Կ. Պոլսէն ֆիւս-
թինձէ մալուխ մը (հեռագրական թել) մը շինելու: Այդ
մալուխը շինելու իրաւունքը անգլիական Խոլորն թէլէկ-
րաֆ Գըմբէնիին կը վերաբերի, եւ տարի մըն է որ անգ-
լիական զեսպանատունը արգելք կ'ըլլայ այդ արտօնու-
թեան Գերմանացիներու տրուելուն: Հիմակ կ'ըսուի սա-
կայն թէ թիւրքիա գաղտնաբար այդ արտօնութիւնը շը-
նորհեր է Գերմանացիներու, որոնք մալուխը պիտի շինեն
ու բանեցնեն, հասոյթին մէկ մասը թիւրքիոյ թողով:

Իշմիրի, Պէրուլի եւ Երուսաղէմի մէջ գերմանական
նաւակաւաններ բացուելու վրայ են: Դուրը ասոր դէմ բո-
ղոքեր է. ի պատասխանի գերմանական զեսպանատունը
ըսեր է որ ինչո՞ւ ինք զուրի մնալու է առաւելութենէ
մը զոր կը վայելեն Աւստրիա, Ֆրանսա և Անգլիա:

Այս անտեսական շահերու հետապնդումէն դուրս,
Գերմանացիները թիւրքիոյ բազաբազան կացութեան
խառնուիլ ուզելու երեւոյթ չունին: Կէս-պաշտօնական
Քիօլնիշի Յայդուսկ մարտ 14ին Պերլինէն հեռագիր մը
կը հրատարակէ, ըստ երեւոյթին Գերմանիոյ արտաքին
գործերու նախարարութենէն ներշնչուած, որ անուղղակի
պատասխան մըն է անգլիական մամուլին մէջ մերթ ընդ
մերթ հրատարակուած այն լուրերուն որոնք Գերմանիան
կը ներկայացնեն ձեռքի տակէ Ռուսիոյ դէմ գործող: « Ի-
րողութիւնը սա է սակայն, կ'ըսէ հեռագիրը, թէ Գերմա-
նիա կատարելապէս ձեռնպահ կը մնայ Ռուսիոյ ե թիւր-
քիոյ միջև առկա խնդրին մէջ, և Պերլինի կառավարու-
թիւնը « եւ է գիտաւորութիւն չունի ձեռքը կրակը խոթել՝
անկից շահանակները դուրս քաշելու համար ուրիշի օգ-
տին (այսինքն Անգլիոյ): Անգլիական ստոյգ ազդիւրէ կը
տեղեկանանք թէ Անգլիա յօժար չէ թիւրքիոյ օգնելու ընդ-
դէմ Ռուսիոյ, և ազդարարած է Դրան թէ, քանի որ թիւր-
քիա բանի տեղ չչրաւ բարենորոգումներու անգլիական
առաջարկութիւնները, Անգլիայէն օգնութիւն սպասելու չէ
այս գործին մէջ:»

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Վերջին պահուն, անգլիական թերթերուն մէջ կը
գտնենք Րիւդէրի հետեւալ հեռագիրը Կ. Պոլսէն, մարտ
14 թուականով.

« Ռուսիոյ պահանջումները պակսեցնելու համար Բե-
դրպուրկի օսմանեան զեսպանին ըրած զիմուժը ապարդիւն
եղաւ: Մուրադիէլի կոմսը յայտարարեր է թէ Ռուսիա չի
կրնար « եւ է կերպով փոխել իր պահանջումները, և զար-
մանք յայտներ է թիւրքիոյ ցոյց տուած ընդդիմութեանը
վրայ, քանի որ խնդրուած՝ օսմանեան կառավարութեան
օգտին համար է եւ թիւրքիան պաշտպանող պետութենէ
մը կը բղիւի: Կոմսը ի վերջոյ խնդրեր է թիւրք զեսպա-
նէն իմաց ալ սուլթանին թէ Պ. Չինովիէլի հրահանգ

ղրկուած է պնդել իր պահանջութեան վրայ, իրենց սկզբնական ձևին մէջ:

«Այս զեկուցումը ոտանայուն, սուլթանը իր նախարարներուն ու ուրիշ պաշտօնակալներու կարծիքը հարցուց, որոնք այդպիսի պահանջումի մը սկզբունքին դէմ եղան, անընդունելի նկատելով զայն՝ եթէ կայսրութեան շահերը և արժանապատուութիւնը պահպանելու բացարձակ խոստում չտրուի: Սուլթանը նոյնպէս տեղեկագիր մը ուղեց Երջաըզ գումարուած զինուորական յանձնաժողովէն՝ գործին ռազմագիտական երեւոյթին մասին: Խնդիրը յետոյ նախարարներու ժողովին առջև պիտի դրուի և ի վերջոյ սուլթանին որոշմանը պիտի ենթարկուի:

«Ամէն ոք կը հասկնայ ոուսական պահանջումին ծանր հանգամանքը, և անձկութիւնը մեծ է պաշտօնական շրջանակներու մէջ, ուր դժուարութեան մէջէն ելլելու գործնական միջոց մը չի տեսնուիր: Միւս կողմէն, Իերմանիոյ բռնած անտարբեր զիրքը շատ մեկնութեան առիթ կուտայ:»

L. 2.

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ընտանիքը՝ իր կայսրաշքեանը պես բայրայնեղն յիշուցէ: Փետայեկ ետքը՝ կարգը հիմակ աղւիւսներ եկած է: Վիեննայէն հետագիր մը կը ժանուցանէ թէ սուրբանիկն սիրական աղջիկը, Նատէշուս (°) ձօրը տունէն փախեր անյայտ եղեր է թիւրք բանաստեղծի մը՝ Նիկեարի հետ. (ժանօք գրագիտուն Նիկեար հանըմը սարկօք): Հետագիրը կը յաւելոյր թէ Ապտիւզ Համիտ շատ զրածուներ է այս դեպքէն:

ՍՍՏՏՍՅԻ անգլիական դեր-հիւշատոսիսն դիմ գործուած յարձակումը ծանր հետեւանք մը պիտի չունենայ: Պիերոսի կուսակալը այցելութիւն մը տարով հիւշատոսիսն, ցաւ յայտներ է եղածին համար: Սայտայի մէջ ալ գայմագամը նոյն ձևակերպութիւնը կատարեր է դեր-հիւշատոսիսն մօտ, եւ իմացոցեր է թէ գլխաւոր յանցաւորները, թռնով 13, խստիւ պիտի պատժուին:

ՉԵՐԲԱԿԱՍՏԱՆԻԹԻԻՆՆԵՐԸ կը շարունակեն Կ. Պոլիս: Վերջին ձերբակալութիւններուն մէջ կը յիշուի Միշգիւրիս պէյ, Լոնտոնի օսմանեան նախկին դեսպանին (յոյն) եղբորորդին, որ մատուցուած է եւրոպացի քրտակցի մը՝ որուն խօսքեր եր երկրին վատար վարչութեան մասին: Դեսպաններուն դիմումին վրայ, Միշգիւրիս պէյ լողատ քողոցներ է:— Իրեն հետ ձերբակալուած բարձրաստիճան թիւրք մը, Իպիտոսիսն իշխան, այդպիսի պաշտպանութեան մը զոչրկ, բանտին մէջ չարաչար տան:

չոռելի յետոյ՝ Թայիֆ արքայութեան է, որուն սպանիչ կիլիսիան տակ առոյց մահ մը կը սպասէ խեղձին:

Ոչորիչ մանկեղանակներ ալ, որոնք բարեկրօնաւորներու պիտի լինէին վրայ խօսելու ռաիւր գործեր են ասորի անդին, ձերբակալութեան են: Բայց որովհետեւ, բացի աշագակներու պատիկ խոսքէ մը, Թիւրքիոյ մէջ՝ խաւքի քրիստոնէայ՝ մարդ մը չկայ որ երկրին վարչութեան գոն ըլլայ, սուրբանը աչքը գոց կրնայ ձերբակալել տալ հանդիպած բոլոր մարդիկը: Իրաւ է որ, արդէն, Թիւրքիան ոչորիչ բան մը չէ այսօր բայց երբ խոշոր բանտ մը:

Նորագոյն հետագիր մը կը ժանուցանէ Սրբիթ պէյ անուն անձի մը ձերբակալութիւնը, և ոչորիչ երկու պաշտօնատարներու արքայութեան: Սրբիթ պէյ վերջին է այն խոսքին որ Հարաւային Աֆրիկէի պատերազմին սկզբնաւորութեան առեւ համակրական ուղեբժ մը ներկայացոց Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատան: Այդ ցոյցին մասնակցող բոլոր Թիւրքերը առանց դատաստանի արքայութեան, հակասակ սա իրողութեան թէ անգլիական դեսպանին բացարձակ խոստում տրուեցաւ որ անոնցմէ ոչ մէկուն ձեռք պիտի դպցուի այդ գործին համար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ յառաջիկայ թիւով պիտի սկսինք հրատարակել փոքրիկ վեպ մը գոր գրած է մեր աշխատակից Երօտ: Մեր ընթերցողները հոն պիտի գտնեն, ինչպէս միշտ, այն փայլուն հեղինակներն են սուր ու ոգելից երգիծանքի գերագանց յատկութիւնները որոնք արդի հայ մատենագրութեան այդ ձիւղին մէջ առաջին տեղը գրաւել տուած են իրեն աներկբայ:

Վեպին վերնագիրն է «ՊՐՕՊԱԳԱՆԴԻՍՏԸ».

ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ շարասարքերը Նիւ-Եորքին Ուսքըր փոխադրուած է, առջի մօտ ըլլալու համար հայ յարեան հոծ կեդրոններու, ոչոր հետգիտէ առջի համակիր ու հակակ ընդունելութիւն մը կը գտնէ:

ՀԱՍՏԵ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչեւ 15 ինչ: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 ամլար: